№ 100 ՇԱԲԱԹ, 12 ՄԱՅԻՍԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 12 ՄԱՅԻՍԻ № 100

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի։
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը։
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մօսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и Ко, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱԶԳ

„ՄՇԱԿԻ" 40-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԲԻՒՐՕՆ սրանով յայտնում է ի գիտութիւն հայ հասարակութեան, հիմնարկութիւնների և անհատների, որ այսուհետև (այժմ և յոբելեանի օրը) թէ շնորհաւորական հեռագիրներ, ուղերձներ և թէ այլ դիմումներ պէտք է ուղղել հետևեալ հասցէով.

ա) Հեռագիրների համար՝ Тифлисъ. Редакція „Мшакъ".
Tiflis. Rédaction „Mschak".
բ) Ծրարների համար՝ Тифлисъ. Редакція „Мшакъ". Для Юбилейнаго Бюро.
Tiflis. Rédaction „Mschak". Յոբելեանական Բիւրօյի համար։

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍԻ 20-ԻՆ
„ՄՇԱԿԻ" ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ Է

ԲԱՆԴԱԾ ՕՋԱԽ

պիէս 3 գործ., հեղ. Գ. Սունդուկեանի

Բարեհաճ մասնակցութեամբ՝ տիկնանց—Արղութեան-Երկայնաբազուկ Ս., Ալիխանեան Վ., Առաքելեան Ե., Առստամեան Հ., Աֆրիկեան Ե., Ալիբէկեան Ն., Բաբեան Եկ., Բաղդասարեան Ա., Դօլուխանեան Ն., Եղեկեան Ն., Մելեան Վ., Յարութիւնեան Ե., Շահպարոնեան Ր., Շխեան Վ., Սպէնդիարեան Իւ., Վարդանեան Ձլ., Քալանթար Ս.—և օրիորդների՝ Աղասարեան Հ., Աբովեան Ե., Կարաջեան Ա., Մուրադեան Կ., Մելիք-Շահնազարեան Թ., Նէլլի, Տէր-Մարկոսեան Օ.—և պարոնների՝ Բաբեան Ա., Դովլաթբէկեան Ա., Եղեկեան Վ., Մելիք-Բէգլարեան Շ., Մարտիրոսեան Ռ., Շահպարոնեան բժ. Ս., Շիրինեան Կ., Տիգրանեան Լ., Փիլօյեան Տ. և դերասանների՝ Տէր-Դաւթեան Գ. և Միրաղեան Գ..

ՌԵԺԻՍԵՕՐ՝ ՅՈՎՀ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ

Սկիզբն է երեկոյեան ժամը $8^{1}/_{2}$-ին:

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Եփրեմ Ծատուրեանի խանութում, Դվօրցօվայա փողոցի վրա, իսկ ներկայացման օրը՝ Թատրօնի կասսայում։

(առ.) 0—4

ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿ „ՄՇԱԿ" ԼՐԱԳՐԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿԻ" ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԱԼՄԱՆԱԽԻ

Բացառիկ ստուար № «Տարազի», որ լոյս է տեսնելու «ՄՇԱԿԻ» ՅՈԲԵԼԵԱՆԻ նախօրեակին։

Այս հոյակապ հանդէսը բաժանված է 10 շրջանի։ I. «ՄՇԱԿԸ» 1872 թւին։ «ՄՇԱԿԻ» առաջին ամբողջ №-ը fac-similé. Գրիգոր Արծրունին և իր աշխատակիցները, խմբագրական կազմը։ Կուլիսների ետև (պատմութեան այժմս սեփականութիւն)։ II. «ՄՇԱԿԸ» 1872—1877 թ., III. «ՄՇԱԿԸ» 1878—1882 թ., IV. «ՄՇԱԿԸ» 1883—1887 թ., V. «ՄՇԱԿԸ» 1888—1892 թ., VI. «ՄՇԱԿԸ» 1893—1897 թ., VII. «ՄՇԱԿԸ» 1898-1902 թ., VIII. «ՄՇԱԿԸ» 1903—1907 թ., IX. «ՄՇԱԿԸ» 1908—1912 թ., X. ՓԱՅԼՈՒՆ ՅՈԲԵԼԵԱՐ «ՄՇԱԿԸ»։

Կենսագրական «ՄՇԱԿԻ» (ժամանակագրական)։ Ընդհանուր հայեացք։ «ՄՇԱԿԸ» և Թիւրքահայոց հարցը։ «ՄՇԱԿԸ» և կանանց խնդիրը։ «ՄՇԱԿԸ» և գիւղը։ «ՄՇԱԿԸ» և քաղաքը։ «ՄՇԱԿԸ» և եկեղեցին ու կրօնը։ «ՄՇԱԿԸ» և այլադաւան հայերը։ «ՄՇԱԿԸ» և մեր այլացեղ, այլազգի դրացիները։ «ՄՇԱԿԸ» և Կովկասը։ «ՄՇԱԿԸ» և Ռուսաստանը։ «ՄՇԱԿԸ» և Եւրոպան։ «ՄՇԱԿԸ» և պարսկահայը, թիւրքահայը։ «ՄՇԱԿԸ» և հայկական գաղութները։ «ՄՇԱԿԸ» և դպրոցը, գրականութիւնն ու մամուլը։ «ՄՇԱԿԸ» և արուեստները՝ թատրօն, երաժշտութիւն, նկարչութիւն և այլն։ «ՄՇԱԿԸ» և աղէտները՝ սով, ժանտախտ, հրդեհ, կոտորած։ «ՄՇԱԿԸ» և բարեգործութիւնն ու ինքնօգնութիւնը։ «ՄՇԱԿԸ» և ազատութիւնը։ «ՄՇԱԿԸ» և աշխատանքը։ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ և յեղափոխութիւնը։ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻՆ և ՐԱՖՖԻՆ։ «ՄՇԱԿԸ» և իր ոյժը, նշանակութիւնը, դիրքը, կատարած դերը։

Յիշողութիւններ։ Էպիզօդներ։ Առասպելներ, ինսինուացիաներ «ՄՇԱԿԻ» մասին: Եզրակացութիւն։ Մտքի յաղթանակը։ Փայլուն յոբելեար «ՄՇԱԿԸ»։

ԱՆՀԱՄԱՐ ՆԿԱՐՆԵՐ ԵՒ ՊԱՏԿԵՐՆԵՐ, որոնց մի մասը տպագրվում է արտասահմանում։ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ, ՐԱՖՖՈՒ և «ՄՇԱԿԻ» այժմեան ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ մեծադիր գոյնզգոյն պատկերները՝ տպագրված ընտիր. կարելի է դնել և շրջանակների մէջ։

Քառասնամեայ „ՄՇԱԿԻ" աշխատակիցների, մշտական և յատուկ թղթակիցների պատկերները։

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ վերջին լուսանկարը՝ խմբանկար, լուսանկարված մահից մի քանի ամիս առաջ և սեփականութիւն «ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ», դեռ ոչ մի անգամ չը տպագրված։ Fac-similé-ներ Գրիգոր Արծրունու, Րաֆֆու, Հայկակի, և այլն, և այլն։ «ՄՇԱԿԻ» արդի խմբագրատունն ու խմբագրութիւնը։ «ՄՇԱԿԻ» յոբելեանական յանձնաժողովի և արդի աշխատակիցների, թղթակիցների խմբանկարները, և այլն, և այլն։

Բաժանորդագինը

„ՄՇԱԿԻ" ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱԼՄԱՆԱԽԻ

մինչև ներկայ մայիսի 20-ը «ՄՇԱԿԻ» բաժանորդների համար ՄԷԿ ռուբլի, իսկ լոյս տեսնելուց յետոյ՝ ԵՐԵՔ ռուբլի։ Նրանք, որոնք բաժանորդ չեն «ՄՇԱԿԻՆ», վճարում են 50 կ. աւելի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ բաժանորդների համար մինչև մայիսի 20-ը 10 ֆր.։ Կը ստանան յատուկ խողովակների մէջ։

Մելովի ամենաընտիր թղթի վրա հատը 10 ր. (25 ֆր.)։ Տպվելու են շատ սահմանափակ օրինակներ։

Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում:

Դիմել՝ ТИФЛИСЪ, БЮРО ПЕЧАТИ, Головинскій пр., 41.
Արտասահմանից՝ DIRECTION TARAZ, TIFLIS. 26. 0—9

Երկուշաբթի, մայիսի 14-ին
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՅԳՈՒՄ տեղի կունենայ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԶԲՕՍԱՆՔ

Յօգուտ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԵՏԵՒԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ.—Վիճակախաղ, երաժշտական երկու խումբ, Ցեպելին, մանկական խաղեր հմուտ մանկավարժի ղեկավարութեամբ, օղակների խաղ, ձիարշաւ, տումբօչկա, գուշակութիւն, ֆլիռեատի, բաղդի բանալի, բուֆէտ։

Ժամը 8-ին հսկայական ընթացք լապտերներով ու դրօշակներով զարդարված և գեղեցիկ հրավառութիւն։ ◆—◆ Սկիզբը ժամը 3-ին։

Մուտքը մեծերի համար 25 կ., երեխաների և ուսանողների համար 15 կ.։

(առ.) 303. 2—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կիրակի, մայիսի 13-ին, Ժողովրդական Տանը, գրականութեան ուսուցիչ Մ. ՄԱՏԻՆՃԵԱՆԸ հայերէն լեզուով կը դասախօսէ հետևեալ նիւթի մասին.

Թիւրքահայ մեծ երգիծաբանը (ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ)

Դասախօսութեան սկիզբն է առաւօտեան ժամը $10^{1}/_{2}$-ին։

Տոմսակները 5 և 10 կոպէկ արժողութեամբ վաճառվում են Թատրօնի կասսայում։

(առ.) 336. 2—1

ՎԵՐ ԿԱՑ, ԱՐԹՆԱՑԻՐ

Քո խոր թմրութեան մէջ յանկարծ հնչվեցին սթափեցնող խօսքեր՝

— Վեր կաց, արթնացիր։

Այո, հայրենի ժողովուրդ, այն կաշկանդված մտածողութիւնը, այն կամազուրկ հոգեբանութիւնը, այն կապարեայ ընդարմացումը, որ դարեր շարունակ ճնշել էին քեզ, սպառնում էին բոլորովին սպանել քո ինքնուրոյնութիւնը և մահացնել քեզ, իբրև բարոյական մարմին։

Բայց համարձակ էին սթափեցնող կոչերը, ուժեղ էին շեփորները, զգացված էին խրախուսանքները՝

— Ոտքի ելիր, լայն բաց աչքերդ, տես շուրջդ, նայիր հեռուները, դէն մղիր քեզ պատած մամուռը, շարժվիր, առաջ գնա։

Նախ «Հիւսիսափայլի», ապա «Մշակի» էջերից գալիս էին ոգևորված քարոզներ և ցնցող խօսքեր։

— Դէպի նոր կեանք, դէպի նոր աշխատանք,—հրաւիրում էին նրանք։

Աւելի քան կէս դար սթափման գոչերը հնչվել են և հնչվում են հայկական մթնոլորտում։

Նրանք ասում էին՝

— Դու, ժողովուրդ, մնացել ես անգիտակ այն բանին, ինչ որ բարեբաղդութիւն է շնորհել միւս ազգերին. դու տգէտ ես, դու խաւար ես. կրթվիր, սովորիր, զինվիր գիտութեամբ։

Բռնադատող, սթափեցնող և մերկացնող հոգիները ասում էին՝

— Դու կորցրել ես քո անհատականութեան տարրերը, քո կամքը, քո ազատ խօսքը, քո ընտրողական և հասարակական ձեռնհասութեան իրաւունքները. ցոյց տուր ինքնուրոյնութիւն, եղիր գործող մարդ, եղիր քաղաքացի։

Հասարակական մտածողութեան ներկայացուցիչը ասում էր՝

— Դու, ժողովուրդ, ճնշելով քեզ և քո ընտանիքդ՝ դարձրել ես դժոխք և քո կեանքդ. յարգիր քո կնոջ մէջ մարդկային անհատականութիւնը, յարգիր քո զաւակների մէջ մատաղ մարդկային հոգին, յարգիր քո ստորադրեալ պաշտօնեաների մէջ մարդկային արժանաւորութիւնը։

Քարոզը բազմատեսակ էր. յորդորի նիւթը շօշափում էր կեանքի բոլոր խորշերը։

Բարեփոխութեան պահանջը դրված էր իբրև անհրաժեշտութեան թելադրանք։

Եւ մեր իրականութեան մէջ միքանի փոքրիկ քայլեր արված են դէպի առաջ։

Լճացած կեանքը փոքր ինչ շարժվել է իր տեղից, երկբայութեան սաղմերը փոքր ինչ խախտել են աւանդական հասկացողութիւնների հեղինակութիւնը։

Բայց դեռ սահմանափակ չափով։

Արթնացումը դեռ չէ կատարվել լիովին, ժողովրդական ընդարձակ խաւերում դեռ այսօր էլ, դեռ վաղն էլ պահանջ կայ նոր քարոզների, նոր յորդորների, նոր ցնցող պատգամների։

Մեր կենցաղակերտի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ մեր ժողովրդի կեանքի մէջ կան դեռ հազարամեայ հնութեան արտացոլումներ, դեռ Քսենոֆոնի ժամանակների հին իրականութեան երևոյթներ։

Չը պէտք է զարմանալ, որ հնադարեան ապառաժը մի քանի տարիներում չէ փոխարկվել դիւրամշակ և փխրահող անդաստանի իր ընդարձակ ծաւալներում։

Ոչ, չը պէտք է զարմանալ. այլ պէտք է զգալ և գիտակցել կուլտուրական բարեփոխութեան համար պահանջվող դժուար աշխատանքի մեծութիւնը և նրա համեմատ կազմակերպել շինարար գործ, հաւատալով որ ամեն մի նոր քայլ մեզ աւելի ու աւելի մօտեցնում է այն փայլուն ապագային, որը կազմում է մեր տենչանքը։

Ժողովրդական խոշոր մարմնի մէջ դեռ շատ կան թմրած և ընդարմացած մասեր, որոնց պէտք է կեանքի և շարժման հրաւիրել։ Եւ կեսդարեայ խրախուսական «Վեր կաց, արթնացիր» յորդորի վրա պէտք է աւելացնել՝

— Աշխատանք և գործ ցոյց տուր, անխոնջ և անդուլ աշխատանք։

«Մշակը» քառասնամեայ գործունէութիւնից յետոյ էլ իր մշտական եռանդով և ոգևորութեամբ հրաւիրում է բոլորին՝

— Աշխատենք միասին. աշխատենք ով որքան կարող է և ընդունակ է. աշխատենք ժողովրդի ապագայ բարօրութեան համար։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

10 մայիսի

Կոպէնհագէն—Անգլիայից եկան Կայսրուհի Թագուհի Մարիա Ֆէօդորովնան և անգլիական Թագուհի Ալէքսանդրան և կայարանում ընդունվեցին դանիական և նորվէգիական թագաւորական զոյգերից, Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչից, դանիական պրինցներից և պրինցուհիներից։ Նոյին Մեծութիւնները մեկնեցին Ամալէնբորգ, ողջունեցին այրիացած Թագուհուն և իջան պալատում։

Պետերբուրգ.—Կ. Պոլսի ռուսաց գեներալ-հիւպատոսարանը հաղորդեց, որ Սալոնիկի նաւահանգստի ականների պատճառով նաւերի ելումուտը թոյլատրվում է երկու ժամ միայն առաւօտեան և երեկոյեան։

Կովկասեան իշխանութիւնը մի նախագիծ է մշակել Կարսի, Բաթումի և Դաղստանի շրջանների ազգաբնակութեան հողային կարգաւորման մասին։

Ստոկհոլմ.—Թագաւորը և թագաւորական տունը 100,000 կրօն նուիրեցին ժողովրդական նուէրներով կառուցվող զրահանաւի համար։

Համբուրգ.—Վիլհէլմ կայսրի ներկայութեամբ ծով իջեցրին աշխարհիս ամենամեծ շոգենաւ «Իմպէրատորը», որ պատկանում է «Համբուրգ-Ամերիկա» ընկերութեանը։ Շոգենաւի վրա կարող են տեղաւորվել 4100 մարդ։

Բեռլին.—Վիլհէլմ կայսրը հեռագրով ցաւակցութիւն յայտնեց ռուսաց դեսպանի մահվան առիթով։

Լանդտագը 212 ձայնով 99-ի դէմ ընդունեց գերմանական հողատիրութիւնը լեհական շրջաններում ամրապնդելու օրէնքը։

Աւստրո-ունգարական արտաքին գործերի մինիստր կոմս Բերխտոլդի գալուստը ողջունվում է մամուլից։ Բերխտոլդը ընդունվելու է կայսրից։

Լոնդոն.—Նաւային ընկերութիւնների բանւորների միութիւնը որոշեց յայտարարել ընդհանուր գործադուլ։

Պարիզ.—Պատգամաւորների պալատի նախագահ ընտրվեց Դեշանէլը։

Բուդապեշտ.—Պարլամենտի երէկվայ միջադէպերի պատճառով սկսվեց գործադուլ։ Գործաթողները առաւօտեան, թւով 50,000 հոգի, կանգնեցնում էին էլեկտրաքարշի վագոնները, ջարդում էին ապակիները. փորձեցին պարլամենտի առաջ միտինգ կայացնել։ Վերջին հանգամանքին արգելք եղաւ ոստիկանութիւնը։ Քաղաքի զանազան տեղերում տեղի ունեցան յարձակումներ ոստիկանութեան վրա, նետելով քարեր ու կրակելով ատրճանակներ։ Ոստիկանութիւնը և զօրքը գործի հանեցին հրազէն և սառը զէնք. սպանվեց 1, վիրաւորվեցին 63 բանւոր, որոնցից 25-ը ծանր։ Վերջիններից երկուսը մեռան։ Ոստիկաններից վիրաւորվեցին 7 մարդ։

Գործաթողների մի ուրիշ համախմբում ցրեցին զօրքերը։ Ամբոխը խանգարեց ժողովրդի համախմբման։ Ցուցարարներից մինը սպանվեց։ Պարլամենտի մերձակայ փողոցները ցուցարարներից մաքրելու ժամանակ վիրաւորվեց 12 տարեկան մի դպրոցական և ճանապարհին մեռաւ։ Խանութները փակ են։ Աւտոմոբիլները և էլեկտրաքարշի վագոնները չեն երթևեկում։

Վիեննա.—Պատգամաւորների պալատում սոց.-դեմոկրատ հռետորներից մինը առաջարկեց՝ ի նկատի ունենալով Ունգարիայում կատարվող դէպքերը՝ դադարեցնել նիստը ի նշան համերաշխութեան ի դէմս ընդհանուր ընտրողական իրաւունքի։ Լսվեցին բողոքի բացագանչութիւններ։ Առաջարկութիւնը մերժվեց։

Ֆիլադելֆիա.—170,000 հանքագործ բանւոր աշխատանքները վերսկսեցին։

Նէապօլ.—Քաղաքային երկաթուղու խորտակման ժամանակ վիրաւորվեցին 63 մարդ։

Վաշինգտոն.—Դրութիւնը Կուբայում երկիւղ է ներշնչում։ Կօնգրէսի անդամներից շատերը դիմեցին ապստամբ վայրերը՝ նեգրերին համոզելու հաշտութիւն կապել։

Թէհրան.—Քիրմանում կարգուկանոնը վերահաստատված է։

Համադանում յամառ կերպով խօսում են, թէ Սալար-ուդ-Դովլէն մեռել է։

Շքեղ հանդէսով թաղվեց Եփրեմը։

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

10 մայիսի

Կ. Պոլիս.—Ֆինանսների մինիստր Նաիլ-բէյը հրաժարական տուեց։ Հրաժարվելու է նաև արտաքին գործերի մինիստր Ասիմ-բէյը։

Բ. Դուռը յայտնեց մեծ պետութիւններին, որ իտալացիք խախտել են միջազգային իրաւունքը, գերի վերցնելով Ռոդոսում 700 թիւրքերի։

Բ. Դուռը հեռագիրներ է ստանում զօրքերի և ալբանների կռիւների մասին Սկիւտարի վիլայէթից։ Ներքին գործերի մինիստր Խալիլ-բէյը հաղորդում է, որ գնում է Սկիւտար փոխանակ Կ. Պոլիս վերադառնալու։

Մինիստրների խորհուրդը քննեց ալբանական գործերը և Աբդիւլ-փաշային Ալբանիայի զօրքերի հրամանատար կարգելու հարցը։

Հրատարակված պաշտօնական հաղորդագրութիւնից երևում է, որ ալբանները միշտ դիմադրել են կառավարութեան բարենորոգիչ աշխատանքներին։ 600 ապստամբների ցրել են զօրքերը և ժանդարմները։ Կառավարութիւնը ձեռք է առել անհրաժեշտ միջոցներ կարգուկանոնը վերահաստատելու համար։

Ցէտինիէ.—Տեղի ունեցաւ ընդհարում չեռնոգորական և թիւրքական սահմանապահ զինւորների միջև։ Ծանր վիրաւորված են 2 չեռնոգորցի։ Կատարվում է քննութիւն։

Սալօնիկ.—Էքս-պատգամաւոր Իսմայիլ-Քէմալը, որ ղեկավարում է Իփէկի շրջանի ապստամբութիւնը, կառավարութեանը մի յուշագիր ուղարկեց և պահանջեց նշանակել ալբան գեն. նահանգապետ, վերադարձնել զէնքերը, պաշտօնանկ անել մի քանի բարձրաստիճան պաշտօնեաների։

ՆԱՄԱԿ ՉԻՆԱՍՏԱՆԻՑ

Կաշգար, 24 ապրիլի

Երէկ կէս գիշերին տեղիս գեն.-նահանգապետին, սրա երկու պաշտօնեաներին, նաև նահանգական դատարանի պաշտօնեաներին ու քաղաքապետին չարաչար սպանել են։

Տեղիս զինուորական վարչութեան ընդհանուր հրամանատարը այդ քստմնելի սպանութեան առիթով ծանուցում հրատարակեց, որի մէջ ասված է, թէ սպանվածները արժանի էին պատժի՝ իրանց շատ սխալ քայլերի համար. Նոյն այդ ծանուցագրով յայտնվում է, որ սպանվածների փոխարէն շուտով կը նշանակվեն նորերը։ Սպանվածները, ըստ այդ յայտարարութեան, մեղաւոր էին, որովհետև իրանց ծամերը կտրեցին, եւրօպական գլխարկներ ծածկեցին իրանց գլխին։ Այժմ մեր քաղաքը զինված զինուորների պաշտպանութեան ներքոյ է։ Դրութիւնը ծանր է։ Իրանց ծամերը կտրած չինացիների վիճակը երկիւղալի է։

Խանութները փակ են. ամբոխը ահ ու սարսափի մէջ է։ Ունեւորները իրանց ինչքը գիւղերն են փախցնում։

Սպասվում են աւելի բարդութիւններ։ Քաղաքիս երկաթէ դռները փակված են և երթևեկութիւնը դադարած է։

Ռուսաց և անգլիական ընդհանուր-հիւպատոսները ամենաեռանդուն կերպով ինքնապաշտպանութեան են դիմել։

Մթերքները չափազանց թանգացել են։ Քաղաքը պաշարողական դրութեան մէջ է և զինուորական դրութիւն է յայտարարված։

Ց. Փ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ՄՇԱԿԻ» ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

«Մարտ» երկշաբաթաթերթը իր № 9-ում խօսելով «Մշակի» յոբելեանի մասին (նա զետեղել է և Գր. Արծրունու, Ալ. Քալանթարի ու Հ. Առաքելեանի պատկերները), հետևեալն է գրում.

Ամսիս 26-ին Թիֆլիսում տեղի է ունենալու «Մշակ» լրագրի հրատարակութեան 40-ամեայ յոբելեանի հանդէսը։

Մենք դեռ տարւոյս սկզբում ողջունել էինք այդ յոբելեանը («Մարտ» № 1), ողջունել էինք հայ մամուլի 40-ամեայ յաղթանակը։ Մենք ասել էինք, որ 40 տարի հայերի մէջ շարունակ թերթ հրատարակելը մեծ գործ է։ Իսկ ամեն մի գործ՝ մեծ թէ փոքր՝ ունի իր թերութիւնները։ Բայց մենք այն էլ յիշել էինք, որ որևէ գործ գնահատելիս՝ նրա առաւելութիւններն ու թերութիւնները պէտք է տեղաւորել կշեռքի նժարներում և, ի հարկէ, ծանր կողմը գնահատել։

Պէտք է առանձնապէս նկատի առնել՝ հայերի մէջ մամուլի գործով զբաղվելը և աչքի առաջ բերել այն հալածանքները, որ մղվում են մամուլի դէմ, այն չանթերը, որ հեղեղվում են նրա ղեկավարների գլխին, և ապա ըմբռնել թէ ի՛նչ ասել է 40 տարի մաքառել այդ հալածանքների դէմ, և այսօր ճակատ պարզել, 40-ամեայ դրօշը տակաւին ազատ փողփողացնելով։

Ի՞նչ է արել «Մշակը» քառասուն տարւայ ընթացքում։

Այս հարցին պատասխանելու համար տեղ չը կայ լրագրական էջերում։ Դրա պատասխանը կարող է տալ մի մեծածաւալ գիրք, իսկ այդ գիրքը պէտք է գրվի փոքր ինչ յետոյ, այն պէտք է գրէ մի մարդ, որի դեվիզը լինի «զոր ինչ գրեցաւ, գրեցաւ»։ Պատմագիրն անպայման պէտք է կատարեալ լինի իր ընտրած ճիւղի մէջ, կամ այդ կատարելութիւնը նա պէտք է որոշէ իր խորին համոզմունքով։ Եթէ պատմագիրն այսօրվայ գրածը վաղը ջնջելու է, այսօրվայ ասածը վաղն այլ կերպ է մեկնելու, ապա ուրեմն նրա գրիչը գիրք գրելու համար չէ, և նրա գիրքը չէ կարող պատմութեան անաչառ աղբիւր լինել։

Այսօր յոբելեանի օր է։ Հայերի մէջ աւագագոյն օրաթերթը տօնում է 40-ամեակ, մինչև իսկ այդ տօնն էլ բացվում է կռիւների և աղմուկների տակ։ Այդ տօնը պէտք է ողջունել։

Այդ տօնը հայ մամուլի տօնն է։

Արծրունին հիմնել է «Մշակը» կռիւների տակ, նրա յաջորդները շարունակել ու շարունակում են նրա գոյութիւնը կռիւների տակ, այսօր 40-ամեայ յոբելեանը տօնում են կռիւների տակ, սիրելի է յուսալ, որ այսուհետև էլ նա շարունակվի՝ թէկուզ էլի կռիւների տակ։

Բայց ինչ է հայ մամուլի ճակատագիրը։ Ո՛չ ապաքէն կռիւ։ Եւ ո՛չ ապաքէն մի ժողովուրդ խաւարից դէպի լոյս տանելու միջոցին անխուսափելի է կռիւը։

Մենք միայն ցանկանք, որ մամուլի մէջ կռիւը լինի մաքուր, գաղափարի կռիւ։

Մենք, թէկուզ կռիւների տակ, ողջունում ենք հայ մամուլի յաղթանակը, ողջունում ենք «Մշակի» քառասնամեակը։

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, 11 մայիսի

Յոբելեանական Յանձնաժողովը շնորհակալութեամբ ստացաւ «Մշակի» խմբ. միջոցով հետևեալ նուէրները «Մշակի» ֆօնդի համար. 1) Սպահանից, պ. Ա. Աթայեանի միջոցով 88 ր. 22 կ. (ցուցակը տպված է «Մշակի» № 99-ում), 2) Շուշից, Խ. Ք. Իսկանդէրեանից 3 ր., 3) Մոսկվայից, պ. Արտաշէս Աֆրիկեանից 100 ր., 4) Թիֆլիսում, պ. Թովմաս Խանդուլեանից 100 ր.։ Մինչև այժմ ստացվածների հետ միասին ընդամենը ստացված է 14,031 ր. 22 կ.։

Ծանօթ.—Այս գումարի մէջ չեն մտնում Կանանց Մասնաժողովի ստացած նուէրները։

Յանձնաժողով

Ի՞ՆՉ ԱՐԻՆ

Եղբարք Ժամհարեանների գիւղատնտեսական դպրոցը Գանձակ քաղաքին կից եկեղեցապատկան Սրափիլու կոչված գետնի վրա կառուցանելու խնդիրը լուծելու համար, մարտ ամսի 18-ին և 19-ին ծխ. ժողով է կազմվում ս. Յովհաննէս մայր եկեղեցու ծխականներից։

Այդ ժողովներում, ի նկատի ունենալով գիւղատնտեսական դպրոց ունենալու անհրաժեշտ պահանջը թէ Գանձակ քաղաքի բնակիչների, որոնք, գրեթէ, կէս մասը այգեգործութեամբ, գինեգործութեամբ է պարապում, և թէ առաւել ևս նրա շրջակայ գիւղացիութեան համար, որը խաւարի մէջ խարխափելով, գիւղատնտեսական գիտելիքներից բոլորովին զուրկ լինելով՝ հին նահապետական ձևով երկիրը մշակելուց, իր դառը քրտինքի թափով վաստակածը չարաչար տանջանքներով ձեռք բերելուց չէ բաժանվում, և այն թէ որքան լոյսի ճառագայթներ պէտք է տարածվեն այդ կենսունակ հիմնարկութիւնից դէպի Գանձակի նահանգի գիւղացիութեան մութը, մռայլ մշուշով պատված կեանքի խաւար անկիւնները, որքան փորձնական գիւղատնտեսական գիտելիքներ պէտք է այդ ուսումնարանը մատակարարէ տեղիս ազգաբնակութեանը, ժողովականները՝ մի շարք հարցեր բազմակողմանի քննելուց յետոյ՝ որոշում են Ժամհարեան եղբայրների բարի ցանկութեանը մեծ թափով ընդ առաջ գնալ և այդ տնաշէն նպատակը ի կատար ածելու համար՝ եկեղեցապատկան Սրափիլու գետնից 200 դեսեատին, դեսեատինը 100 րուբլով ծախել, թէ դպրոցի շինութեան և թէ նրա միւս կարևոր պահանջներին բաւարարութիւն տալու համար։

Այս վճռը կայացնելուց յետոյ ծխականները հեռագրով Ժամհարեան եղբայրներին յայտնում են իրանց երախտագիտութիւնը և խորին շնորհակալութիւնը։

Նոյն ժողովում կազմված համախօսականը, որին ստորագրում են և նրանք, որոնք ինչ-ինչ պատճառներով՝ ցաւելով ժողովից բացակայ են լինում, իսկ գործին գիտակցաբար վերաբերվում, ներկայացվում է կօնսիստօրիային, որ վերջինս այդ մասին զեկուցանէ սինօդին։ Պատմում են, թէ Եփրեմ սրբազանը մեծ համակրութեամբ է վերաբերվում այդ բեղմնաւորիչ գործին, խոստանալով ժողովրդի համախօսականը ներկայացնել սինօդին իր՝ գործին նպաստող զեկուցման հետ։

Սակայն, երբ գործը յուսալի ճանապարհի վրա կանգնած է լինում և իր բնական ընթացքի մէջ մտած, մինչև կօնսիստօրիայի տատանվող, անվճռական մեթոդից դուրս գալը, յանկարծ տեսնում են՝ Գանձակի գլխին մութը ամպերը կուտակվեցին և չարաբաստիկ սև ագռաւները իրանց կռկռոցը սկսեցին։ Զը մոռանանք՝ ընթերցող, որ Գանձակը սև ագռաւների ճոխ բնակարան է համարվում՝ գոյութեան կռիւը այդ պարարտ հողի վրա առաջ մղելու համար։

Այդ միջոցին պաշտօնական գործերով Գանձակ է ժամանում սինօդի անդամ Մեսրոպ սրբազանը։ Օգտվելով նպատակայարմար այդ հանգամանքից, մի քանի սողուններ, սողալով սրբազանի ոտների շուրջը, կոկորդիլոսի արցունքը աչքերից թափելով, թարգմանում են նրան, սրբազանին, թէ Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցու ծխականները դաւաճանել են եկեղեցու շահերին Սրափիլու գետնի դեսեատինը 100 րուբլով ծախելու, քանի որ դեսեատինը արժէ մինչև 300 ր.։ Եւ թէկուզ, ասում են սողունները, իրանք էլ են համախօսականը ստորագրել, բայց այդ կատարել են ճնշման տակ. ուրեմն քանի դեռ ուշ չէ, հարկաւոր է շտապել եկեղեցու շահերին սպառնացող վտանգի առաջն առնել։

Մեսրոպ սրբազանը սողունների պատմածները մասին պինդ փաթթած է շինում և Գանձակից Թիֆլիս վերադառնալուն պէս իսկոյն այդ մասին Եփրեմ սրբազանին հաղորդում, որից յետոյ կօնսիստօրիան, թէև առանց գրաւոր բողոքի, ծխականների համախօսականի դէմ վերադարձնելով համախօսականը, պատուիրում է Գանձակի հոգևոր կառավարութեան, որ նա ի նկատի առնելով խնդրի լուրջ լինելը մէկ կողմից, միւս կողմից՝ որ Սրափիլուի գետնի դեսեատինը 100 ր. էժան են գնահատել, քանի որ դեսեատինը արժէ մինչև 300 ր., նորից բազմամարդ ժողով կազմի և նորից գնահատի գետինը։ Սակայն կօնսիստօրիան իր գրութեան մէջ բնաւ չէ ուրանում գիւղատնտեսական դպրոցի անհրաժեշտ կարևորութիւնը հայ հասարակութեան, ժողովրդի կեանքի լայն ասպարէզում։

Այս ապրիլի 22-ին տպագրած հրաւիրաթերթերով տեղիս յաջորդ Լևոն վարդապետը ծխականներին ժողովի է հրաւիրում։ Ժողով կայանում է. ծխականների այնպիսի մի մեծ բազմութիւն է ժողովին ներկայ լինում, որ Գանձակի իրականութեան մէջ մի չը տեսնված, մի աննման երևոյթ է համարվում։ Ժողովին ներկայ են լինում 369 ծխական։

Հայր սուրբը մի աղօտ բացատրութեամբ ժողովականներին յայտնում է կօնսիստօրիայից առաջարկված խնդիրները և առաջարկում լըջօրէն տալ այդ խնդիրների արժանավայել լուծումը։

Ժողովը աղմկալի էր, շարունակվում է մինչև ժամը $5^1/_2$-ը. թեր և դէմ դատողութիւններ են լինում. միայն սողունները, իրանց կեղևի տակ թաքնված, ասպարէզ չեն դուրս գալիս, ձայն ծպտուն չեն արձակում, ժողովի ամբողջ ընթացքում խորին լռութիւն են պահում։

Բազմամարդ ժողովը դրված հարցերը երկար ու բարակ ձգձգելուց, քննելուց յետոյ՝ ի նկատի ունենալով եկեղեցապատկան Սրափիլու գետնի որակը, գոյութիւն ունեցող պայմանները, գետնի գարնանացանքերը ոռոգելու համար ջուր չունենալը և այն, որ Սրափիլուի գետնի կէս բաժինը պատկանում է Համամփիւռ տոհմին, և այս վերջինի ներկայացուցիչները իրանց բաժին հողից լաւ կտորները ծախում են գերմանացիների վրա այգիներ շինելու համար դեսեատինը ոչ աւելի քան 100 ր., և վերջապէս այն, որ գարնանացանքը ջրելու համար եղբ. Ժամհարեանները պէտք է ծախսեն մինչև 30,000 ր., որ քեհրիզի ջուր հանեն և թէ գիւղատնտեսական դպրոցը Սրափիլուի գետնի վրա հաստատելուց յետոյ՝ եկեղեցապատկան միայնակ 300 դեսեատինի գները մէկին մէկ, երկու, մինչև անգամ երեք կաւելանան, նորից որոշում է՝ Սրափիլուի եկեղեցապատկան գետնից ծախել եղբ. Ժամհարեաններին 200 դեսեատին, դեսեատինը ոչ աւել քան 100 ր.։

Ժողովը գործի լըջութիւնը որոնում էր նաև ոչ թէ միայն գետնի արժողութեան մէջ, այլ գիւղատնտեսական դպրոցը Գանձակում անպայման գոյութիւն ունենալու մէջ, ուստի ս. Յովհաննէս մայր եկեղեցու ծխականները, առանց դաւաճանելու եկեղեցու շահերին, պէտք, որքան հնարաւորութիւն լինի, աշխատեն ուրիշ պայմանները ևս թեթևացնել ու եղբ. Ժամհարեանների բարեմիտ ուշը դէպի Գանձակը գրաւել։

Ժողովի արձանագրութիւնը, համախօսականը ստորագրեցին 315 հոգի. ոմանք ժողովը երկար տևելու պատճառով համբերութիւն չունեցան մինչև ժողովի վերջը մնալ և համախօսականը ստորագրել։ Սրանց շարքում էլ փորսողները փորսող տալով, սողունները սողալով չքացան աննկատելի կերպով։ Սրանց վերաբերեալ կարելի է ասել՝ «Հրաժարիմք ի սատանայէ»։

Այսպէս վերջացաւ ժողովը և երկրորդ անգամ պէտք է համախօսականը ներկայացվի կօնսիստօրիային։ Տեսնենք այս բոլորից ի՞նչ կը ծնի. սողունները, որ քաջութիւն չունեցան բաց ճակատով, ազատ խօսքով ասպարէզ գալու, իրանց կարծիքը պաշտպանելու, խօսքի տէր հանդիսանալու, պէտք է լռեն, թէ կրկին պէտք է սրա ու նրա ոտների շուրջը սողան ու ջուրը նորից պղտորեն կամ ագռաւների կռկռոցը թափեն այդ կենսունակ գործի գլխին, գործը խանգարելու դիտաւորութեամբ։ Այն ժամանակ գանձակեցոց կը մնայ ասել՝ «Հայրիկ, հայրիկ, աստղը թռաւ և ետքից գիծ չը թողեց»։

Գանձակ Մի ծխականներից

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Մի նոր պղնձահանք

Խաչակապ գիւղ (Գանձակի գ.)

Մեր գիւղից մի վերստ հեռու գտնվող Զըչարակ կոչվող անտառում գիւղացի Նասալի Աղիխանցը գտել է մեծ պղնձահանք։ Ինչպէս երևում է շատ հարուստ է այս հանքը։ Բացի այդ հանքից՝ գտել է միևնոյն մարդը մի քանի զանազան հանքեր մեր գիւղի շրջանում։ Բայց տեղիս բնակիչներից ոչ ոք միջոց չունի այդ հանքերը շահագործելու։

Ապրիլի 18-ին կառավարութիւնը պաշտօնից հեռացրեց գիւղիս տանուտէրին՝ գործած մի մարդասպանութիւն թաքցնելու համար։ Մայիսի 5-ին ընտրված է նրա փոխարէն մի ուրիշը։

Մայիսի 1-ից հեռացված է գործից գիւղիս հարկահաւաք Ղուլեանցը՝ մեղադրվելով որ արքունապատկան 300 ր. է իւրացրել։

Ա. Սահակեան

Դասախօսութիւն թոքախտի մասին

Սիմֆերոպօլ, 4 մայիսի

Ապրիլի 22-ին տեղիս հայոց եկ.-ծխ. ուսումնարանի դահլիճում թոքախտի մասին դասախօսութիւն կարդաց բժ. Արղութեանը, որը շատ պարզ և սահուն ռուսերէն լեզուով բացատրեց թոքախտի ահռելի արած աւերածութիւնները մարդկային կեանքում։ Միևնոյն ժամանակ պատմածի համեմատ՝ ցոյց էր տալիս պատից կախած նկարները, որոնք պատկերացնում էին հիւանդութեան աստիճանները։ Բժ. Արղութեանի ասելով՝ ամբողջ երկրագնդիս վրա տարին թոքախտից մահանում է 3 միլիոն։ Եւրոպայում հաշըւվում է 7 միլիոն թոքախտաւոր հիւանդ, որոնցից տարին մահանում է մէկ միլիոն։ Հիւանդների ամենամեծ բաժինը Ռուսաստանին է ընկնում։ Այդպիսով Եւրոպայում թոքախտից մեռնում է օրական 3000 մարդ. ոչ մի պատերազմ և ոչ մի տարափոխիկ հիւանդութիւն այնքան զոհեր չէ խլում, որքան թոքախտը։ Այստեղ ևս ամենամեծ զոհեր է տալիս խեղճ և աղքատ բանւոր դասակարգը։ Այս ահռելի հիւանդութեան դէմ կռուելու ամենալաւ միջոցը՝ էժան և լաւ շինված բնակարաններն են։

Բժշկի դասախօսութիւնը ընդունվեց բուռն ծափահարութեամբ։

Սիմ. Գրիկեան

Ուրախալի մի երևոյթ

Ղամարլու, 5 մայիսի

Ուրախալի և ուշադրութեան արժանի երևոյթ է, որ Ղամարլուն սկսել է շարժվել և կենդանութեան նշաններ է ցոյց տալիս։ Տխ. երկդասեան դպրոցը այսօրվանից բաղդ է ունենում դուրս գալու անմխիթար և նիւթականապէս ընկած դրութիւնից, շնորհիւ այն համախօսականի, որ նորերս հաստատված է բարձր իշխանութիւնից և որով սպիրտի, կօնեակի, արաղի գործարանատէրերի և խանութպանների վրա պարտաւորեցուցիչ տուրք է սահմանվում դպրոցի օգտին։ Արդէն դպրոցի վարչութեան անդամները գործի գլուխ են անցել և սկսել են այդ ծխական տուրքի գանձումը։

Առանձնապէս շնորհակալութեան արժանի են հոգաբարձութեան նախագահ Հաջի Յակոբ Բաբախանեան և օժանդակ վերահսկիչ յանձնաժողովի անդամ Մակար Սահակեան, որոնք իրանց գործունէութեամբ եռանդուն մասնակցութիւն են ցոյց տալիս՝ գործն առաջ տանելու համար։

Ուրախալի և խրախուսիչ է և այն երևոյթը, որ տեղս կազմվել է բամբակագործութեան մի նոր ընկերութիւն, որին մասնակցում են և յայտնի Բաբախանեան եղբայրները։ Ընկերութիւնը հիմնվում է փայերով, իւրաքանչիւր փայը 100-ական րուբլի։ Այս առիթով ցանկութիւն կայ կարծիքներ և խորհուրդներ լսելու գիւղատնտես Ալ. Քալանթարից։

Գր. Բալասանեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԻԼԻԿԵԱՆ ՈՐԲԱԽՆԱՄ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ ԱՌԹԻՒ *)

Բարոյական կեանքը եւ որբ. ընտանեկան հանգամանքը.— Փոքրերուն համար որբանոցաց մէջ ապրիլը կարեւոր և փափուկ պարագայ մըն է և կը պահանջէ յատուկ ուշադրութիւն, քան որքան չի կարծուիր։

Որբերը հաւաքուած են մէկը միւսէն տարբեր վայրերէ, վարքով, բարեկրթութեամբ և կենցաղով տարբեր ընտանիքներէ, հաւաքուած ի մի, անակնկալ և տխուր հանգամանաց ներքև—ջարդերու և արհաւիրքներու—որոնք մեծապէս ազդած են երկսեռ որբերուն հոգեկան տրամադրութեանց վրայ՝ մանաւանդ չափահասներուն և նամանաւանդ չափահաս աղջկանց ջղային դրութեան վրայ։ Եւ հարկ կըլլայ հաշուի առնել այս ամեն պարագայք։

Որբանոցը նախ պէտք է ջնջէ և սրբէ արիւնոտ անցեալին սև տպաւորութիւնը այդ մատաղ ուղեղներուն, ապա թէ պէտք դրոշմէ՝ իրենց յարաճուն կեանքին հետ և ապագայ կեանքին նօրմալ տարրերը։

Պէտք չէ մոռնալ, որ վաղը այդ որբերը իրենք իրենց բաղդէն պիտի ձգուին կեանքի փշոտ և փորձանքոտ ասպարէզին մէջ, դէմ յանդիման բիւր վտանգներու, ուրեմն և անհրաժեշտ է որ անոնք իրենց կեանքին պատրաստութիւնը և դաստիարակութիւնը ստանան իրենց ապագայ այդ կեանքին պատրաստուելու համապատասխան ոգիով մը, որպէսզի վաղն ալ ինքզինքնին անակնկալներու դէմ գտնելով չընկրկին և չիյնան, ու բարոյական կորուստին անկում մնայ։

Որբանոցին կեանքը պէտք չէ որ կորսնցնէ իր տնական և ընտանեկան հանգամանքը։ Ներքին պաշտօնէութիւնը ներկայանալու է անոնց աւելի հօր, մօր և եղբօր պէս, աւելի քան պաշտօնէի սառն և սարսափեցնող կերպարանքով։

Այս պարագան որքան էական, ցաւալի է ըսել թէ քիչ ըմբռնուած է. գործը, յարմար մարդոց նուազ գտնուելուն, դանցառուած վիճակի մէջ է, և պաշտօնէութեան մեծագոյն մասը իր գործն ու միսիան ուրիշ կերպ չի ըմբռներ, քան ահ ու սարսափ։

Որբախնամ վարչութիւնը պէտք չէ մտահան ընէ բաղդաղուրկ այդ տղոց սիրտին մէջ, ազգին տան յարկին ներքև, սէր և բարութիւն սնուցանելու, քան անտարբերութիւն և ատելութիւն, իրենց զրկուած վիճակին ցուցադրութեամբը և բիրտ եբեսուութեամբը։

Տնօրէններուն անձնաւորութիւնը և բնութիւնը այս տեսակէտով ամենակարեւորն է, դիտուած ըլլալով որ որբանոցաց ներքին վարչութիւնն, աղէկ կամ գէշ վիճակը մեծ մասով անոնցմէ կամ անոնց բարւոք և աչալուրջ հսկողութենէն կախուած է։

Տնօրէնին հսկողութենէն կախուած է նոյնպէս տղոց իրարու հետ կենակցութենէն առաջ եկած պատեհ կամ անպատեհ երևոյթներուն տեղի ունենալը կամ ոչ։

Անխուսափելի է, դժբաղդաբար, որ այդ կարգի հաստատութեանց մէջ, ուր ամեն տեսակի խառնուրդներ կան, ամեն խառնուածքի և ամեն տիպի տղեր, հնար չըլլայ, միշտ, միօրինակ սրբութեամբ մը և մաքրութեամբ մը պահպանել զիրենք։ Բայց աչալուրջ հսկողութեամբ մը, բարոյական առողջ դաստիարակութեամբ մը և մարդաղութեամբ մը այդ չարիքը իր նուազագոյն աստիճանին կրնայ հասցուիլ, եթէ հնար չըլլայ իսկ անհետացնել։

Զգուշաւոր ըլլալու է մանաւանդ պաշտօնէից ընտրութեան միջոցին, զի, որքան իմացած եմ, գէշ բաներ տեղի ունեցած են աւելի այդ կարգի անխղճամիտ մարդոց և գիշերապահներու միջոցաւ, քան նոյն իսկ այդ փոքրիկ որբերէն՝ իրարու նկատմամբ։

Վարչական.—Ամենէն փափուկ կէտին կուգանք, որ միանգամայն դժուարին մասն է որբանոցներու նման հաստատութեանց վրայ գրողի մը համար։

Անուրանալի է, որ որբախնամ գործը անձնուիրութեան կապուած է, ծանր պատասխանատուութիւններով և քննադատութեամբ շրջապատուած։ Պաշտօնը ապերախտ է և անոր համար աշխատողները անհրաժեշտ է, որ իրենց ժամանակէն խլեն անոր յատկացնելու։ Իրապէս գնահատելի ծառայութիւն մը կը մատուցանեն Որբախնամ Յանձնաժողովին անդամները, և ազգը երախտագէտ պէտք է ըլլայ գտնելով անոնց մէջ բարեկամեցողութիւն, և կարծուածէն աւելի ծանր յանձնառութեանց յարատեւութիւն։

Որբախնամը ոչ միայն որբոց բարոյական պատասխանատուն է, այլև անոնց համար ամեն ինչ։ Եթէ ասոնց յարենք և այսպէս մեծածաւալ գործ մը վարելու համար ազգին նիւթական անձկութիւնը և կառավարութեան անխիրտ վերաբերումը, կրնանք ըմբռնել, որ վարդագոյն ոչինչ ունի իրենց պաշտօնը։

Արդարութեան այս պարտքը հատուցանելով՝ մենք, սակայն, անկեղծութենէ մղուած, չենք փափագիր այս ուսումնասիրութիւնը փակել առանց մատնանիշ ընելու և վարչական այն թերութիւնները և նոյն իսկ կամայականութիւնները, որոնք այս յարգելի մարմնոյն անունով գործուեցան։

Անձնական շահախնդրական և քինախնդրական նկատումներ բոլորովին օտար չմնացին անկէ—կազմուած սակայն իր մեծամասնութեամբ յոյժ պարկեշտ, ազնիւ և պատուաւոր անձնաւորութիւններէ—ինչ որ՝ բնական է՝ ցանկալի չէր և չէ ժողովրդական և նուիրական այսպէս հաստատութեանց շուրջ։

Չենք մտներ մանրամասնութեանց մէջ. կը փափաքինք միայն, որ Որբախնամին ողջմտութիւնը յաջողի վերջապէս իր գործը անձնականութենէ ազատել և ամեն ինչ որբերուն տեսակէտէն որոշել։

Չենք ծանրանար հոս, նաև, Կիլիկիոյ վեհ. կաթողիկոսը որբական գործին մէջէն դուրս ձգելու կամաւոր սխալին վրայ, այլևայլ առարկութիւններով, որոնք չեն կրնար արդարացուիլ։ Որբախնամին քննադատելի կողմերէն մէկն ևս իր վարչական անցեալ տարւոյ վերջերու կարգադրութիւններն եղան, խիստ անտրամաբանական և որբանոցաց կանոնաւորութեան տեսակէտէն՝ վնասակար։

Որբախնամը նախապէս ունէր իր պատասխանատու ընդհանուր տնօրէնը, բայց Յանձնաժողովէն մէկ քանիին դժգոհութիւնը անոր անձին դէմ—երբ ոչինչ չէր գտնուած իր գործունէութեան դէմ և տարուան մը պաշտօնավարութենէն վերջ երկու տարուայ համար ևս պայմանագրուած էր—դրդեցին զինք կարգ մը ապօրէն, որքան անվարկական որոշումներու։

«Տնօրէն» տիտղոսը «նիւթական և բարոյական պատասխանատուութեամբ քննիչի» փոխարկելով հանդերձ՝ զինք ուրոյն որբանոցի մը միայնուն տնօրէն կարգեցին, ինչ որ վերի տիտղոսին հետ, որ չըլլան պաշտօն մը կենթադրէ, բոլորովին հակասական կը դառնար։

Այս սխալ ընթացքը բնական է որ իրենց հարուածել ուզած պաշտօնեայէն աւելի վնասեց որբանոցներուն բարեկարգութեան։ Տեղական տնօրէններն ինքնագլուխ գործելու հրահանգուելով, հեռի ընդհանուր քննիչի մը պարբերական հսկողութենէն, պատճառ տուին գայթակղութիւններու և տեղական միջամտութեանց ու էնտրիգներու, որոնց դէմ սակայն դիւրաւ պիտի կրնար առնուիլ։

Վերջաբան.—Որբախնամի տեղեկագիրին քննութեան առթիւ մեր ցոյց տուած թերութիւններուն և սխալներուն՝ մենք զգուշացանք թէ մանրամասնութեանց խորը մտնել և թէ իրողութիւնք մէջ բերել։

Գիտնալով ազգին դուրգուրանքը դէպի իր որբերը, վասն զանոնք խնամելու կոչուած մարմնոյն անդամոց ամենամեծ մասին անշահախնդիր և ազնիւ զգացմանց, մեր սոյն տողերը գրելով՝ մեր նպատակը չէ բնաւ իրենց գործը վարկաբեկել, տրուած ըլլալով անոր բարդ և դժուարին պայմանները։ Մեր փափաքն է պարզապէս, որ սրբազան այդ գործն ու պարտականութիւնը—որուն համար ազգն հայուն երախտագէտ կը մնայ—ըլլայ զերծ մասնաւոր, անձնական և սխալ տեսակէտներէ, որպէսզի որբերուն խնամքը, անոնց ներկայի և ապագայի նկատառումներով միանգամայն, աւելի լաւ և նպատակայարմար պայմանաց մէջ իրագործուի, և օր մը, այդ որբոց ծնողներուն կորուստը ողբանու պէս, անոնց մնացորդներուն բարոյական անկումին աւելի ծանր վիշտն ևս չունենանք։

Մերսին Մինա

---

*) Տես «Մշակի» №№ 97, 98 և 99.

Անմխիթար վիճակ

Շուշի, 3 մայիսի

Քաղաքիս հայ հասարակութեան խորին անշարժութիւնը, միատեսակ տաղտկալի կեանքն ու անտարբերութիւնը դէպի ամէն մի բարեգործական հասարակական նպատակ՝ իր գագաթնակէտին է հասել։

Գծուծ, անձնական շահերը խեղդել են նրա մէջ ամէն ինչ, որ վեհ է, բարձր և իդէալական։

Ո՛վ մեզանից չը գիտէ, որ մեր քաղաքում կան բազմաթիւ հայ ընտանիքներ, որոնք վերջին ծայր չքաւորութեան մէջ են ապրում և հազիւ քարշ են տալիս իրանց սև ու թշուառ օրերը։ Սակայն մենք մի բան անում ենք նրանց համար։ Ո՛չ։

Այս կողմ, ձեռքը դրած ծնօտին, մորմոքում է չունևոր ծնողի սիրտը, քանի նայում է իր մինուճար հիւանդ երեխայի մահճին. տաք գոլորշին բարձրանում է վերմակից, շնչառութիւնը նուաղած, աչքերում արեան հոսումը լճացած և տխրութիւնը մարմրած։ Ի՞նչ անէ դժբաղդ ծնողը, ո՞ւր և ո՞ւմ դիմէ...

Այն կողմ, գետնափոր խրճիթներում, ցրնցոտիները հազիւ ծածկում են մերկ սրունքները՝ դալկացած, նիհար, դժգոյն արարածները, որոնք կրում են մարդ անունը։

Դրանք, ծեր թէ մանուկներ, որբ մնացած են իրանց պաշտպանող աշխատաւոր հօրից, մինը ամուսնուց, միւսները հօրից և այլն։

Դռան ճռոցը րօպէական սթափեցնում է դալկացածներին, և նրանք երազում են եթէ ոչ տաք կերակուր, գէթ մի կտոր չոր հաց։

Բայց, աւա՜ղ, սխալվում են իրանց ենթադրութեան մէջ, որովհետև մեր դեվիզը, մեր բնաւորութեան յատկանիշն է «իւրաքանչիւրը իր համար»։

Խօսել մենք գիտենք յաճախ, իսկ գործել գրեթէ երբէք։

Դուք նկատում էք ամեն մի ինտելիգենտ ասպարիզում անգործունէութիւն դէպի հասարակական ծով կարիքները։

Դուք շատ անգամ լսում էք բացագանչութիւններ՝ «արժէ գործել»։

Այսպէս է դատում նա, ով իսկապէս ցանկութիւն և հնարաւորութիւն ունի գործելու. այդպէս է փաստաբանում և նա, ով միայն պատրուակ է որոնում չը գործելու. դրանով է արդարացնում իր խղճի ձայնը և նա, ով, մի քանի անցողական արգելքներից յուսահատված, ընկել է մռայլ տրամադրութեան մէջ։ Պօղ. Զաքարեան

ՆԱՒԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Բալախանի, 25 ապրիլի

Հանքարդիւնաբերական օրէնքներով եթէ նաւթահանքերում, գործարաններում և ֆաբրիկաներում բանւորը, արհեստաւորը վնասվում է, նա հանքատիրոջից ցմահ ապահովվում է։ Օրինակ՝ եթէ բանւորի մի մատը մեքենայի տակ մնալով կտրվում, ջարդվում և անպէտք է դառնում, նա, համաձայն որոշ օրէնքի, համարվում է մարդկային ընդունակութիւնից զրկված 10%-ով, իսկ եթէ երկու մատից՝ 20% և այլն։ Բանւորը եթէ ստանում է 25 ր. ռոճիկ, 10% վնասվելիս՝ ֆիրմայից ապահովվում է 150 ր., առողջութիւնից 20% կորցնելով՝ 300 ր, և այդպէս աստիճանաբար։ 50 ր. ռոճիկ ստացող վնասվողը՝ կրկնապատիկ։ Իսկ երբ պատահում է, որ ընդունակութիւնը կորցնում է 50% (կէս մարդ դառնալով, ինչպէս օրինակ՝ մի թևից ամբողջապէս զրկվելով կամ մի ոտից), այդ դէպքում 50 ր. ռոճիկ ստացողը ապահովվում է 3000 ր., իսկ մահացած դէպքում—որը նշանակվում է 100%—կամ եթէ միանգամայն անընդունակ է դառնում գործ տեսնելու, կատարելու, նա, եթէ 50 ր. ռոճիկ է ստանալիս եղել, 6000 ր. ապահովվում է, իսկ 25 ր. ստացողը՝ 3000 րուբլով։ Գումարը միանուագ, կամ ցմահ, տարէ-տարի, կամ ամսէ-ամիս վճարելը կախված է ֆիրմայից, որը ընդհանուր գումարից %% դուրս գալով վճարում է միանուագ։

Եղել են դէպքեր, որ անպարտաճանաչ բանւորները կամ արհեստաւորները դիտաւորեալ կերպով փորձել են իրանց մարմնի մի մասը վնասել, որպէսզի կարելի լինի 10—20% վնասի վկայական վերցնել ու ապահովել իրանց, սակայն կեղծիքներ շատ են բացվել։

Բայց մեր խօսքը այդ ֆիրմաների բանւորների մասին չէ։ Դրանք շատ քիչ ապահովութիւն են ստանում։ Այլ նրանց մասին է, որոնք ոչ միայն ապահովութիւն չունեն, այլև սպանված, կորած բանւորները իրանց խաղէյիններից պատանքի փող անգամ չեն ստանում։

Բալախանի գիւղը, որը բաղկացած էր 200 տնից, այժմ հազիւ 50 տուն բնակիչ ունենայ։ Բոլոր տները կապալով տրված են այս կամ այն կապալառուին, գլխաւորապէս թուրքերի, որոնք փորում են թէ բակը և թէ տան մէջը ու նաւթ հանում։ Դրանք փորում են այնպէս, ինչպէս սովորաբար ջրի հորն են քանդում ջուր հանելու։

Քանդում են ձեռքով, անցնում են մինչև 20—25 սաժէն կամ մի քիչ էլ աւելի։ Սակայն ջուրը որքան էլ խորը լինի գտնվելիս, փորողն անվնաս էլ դուրս է գալիս միջից. իսկ ձեռքով քանդած նաւթի հորը, երբ անցնում է խորութիւնը մինչև 30 սաժէնից, նաւթի գազը քանդողների շնչառութիւնը սկսում է ճնշել, խեղդել և թուլացնելով ուշաթափ է անում ու մահացնում։

Այդպիսի զոհեր շատ են լինում, գլխաւորապէս համշարիներից։ Կապալառուները իրանց պատասխանատու չեն համարում, կամ աւելի ճիշդը՝ մահացողների բարեկամները չեն աշխատում ապահովութիւն պահանջել, ի նկատի ունենալով որ այդ կապալառուների միջոցները սուղ են։ Վերջին ժամանակներս այդ հորերի (շախտերի) նաւթը երեսից պակասեց (այլևս 20—25 սաժէնից նաւթ չէ դուրս գալիս), ուստի կապալառուները սկսեցին անցնել աւելի խորը, 40—45 սաժէնի, որից յետոյ զոհերի թիւը սկսեց շատանալ։

Այժմ կառավարչական շրջաններում սկսել են ուշադրութիւն դարձնել, որպէսզի այդպիսի հորերի խորութիւնը 25 սաժէնից աւելի չը լինի։

Ցանկալի է, որ խիստ ուշադրութիւն դարձնէին։ Ս. Գարագաշ

ԿՕՕՊԵՐԱՏԻՎ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երբ մի որևէ գիւղում ժողովրդի մէջ հիմնվում են նոր կուլտուրական ձեռնարկութիւններ, նոյն ժողովրդին ծանօթ մարդու սիրտը լցվում է ուրախութեամբ առաջին իսկ նուագում, քանի որ մեր գաւառական բոլոր անկիւնները զուրկ լինելով որևէ ժողովրդական կուլտուրական գործունէութիւններից, ամեն մի այդպիսի ձեռնարկութիւն բերկրանք է առաջացնում շատերի սրտում։ Ահա՛ այդպիսի մի ուրախալի երևոյթ, այդպիսի մի կուլտուրական ձեռնարկութիւն վերջերս հիմնվել է մեր գաւառի Ներքին-Ախտա կենտրօնական գիւղում, ուր երիտասարդների մի խումբ ձեռնարկել է հիմնել սպառողական ընկերութիւն, որի հիմնադիրների գլուխ է անցել նոր-բայազէտցի երիտասարդ բժիշկ Պ. Խ. Մնացականեանց։

Բաժնեվճար վէր դնելով 100-ական րուբլի (նախապէս 10 ր. տրված) իւրաքանչիւրը, այդ երիտասարդների խումբը արդէն սկսել է անդամներ ընդունել նաև շրջակայ գիւղերից, որոնց թիւը մի պատկառելի գումարի է հասել։ Հասցնելով բաժնեվճարներից ստացված փողերի գումարը մի որոշ քանակի (օր. 3000 ր.), ընկերութեան ձեռնարկողները բաց են անելու այդ կօօպերատիվ ընկերութիւնը—սպառողական խանութը—որը կարող է խոշոր կուլտուրական դեր խաղալ Դարաչիչագի հասարակական տնտեսական կեանքում։

Դարաչիչագի գաւառակը, երբև Նոր-Բայազէտի գաւառի յետ ընկած միջրջան, ունի իր անկիւններում բուն դրած վաշխառուների տիպեր ունեցող առևտրականներ (բացառութիւնները յարգելի են) և կեղեքիչ չարչի վաճառականներ, որոնք զբաղված են յատկապէս գիւղական խաւարամիտ ամբոխին կեղեքելով և նրան պարտքերի ծանրութեան տակ ճնշելով... իրանց «փասփանդը» և ստոր տեսակի ապրանքները թանդ գներով սաղացնելով խեղճ գիւղական հասարակութեան վրա։ Այն ինչ՝ սպառողական ընկերութիւնը, երբև կօօպերատիվ ձեռնարկութիւն, կարող է մեծ բարիք հասցնել գիւղատնտեսական հասարակութեան, մատակարարելով նրան թէ էժան և թէ լաւ տեսակի ու անխարդախ մթերքներ և այլ ապրանքներ։

Այդ տեսակէտից ահա գալիս ենք ի սրտէ ողջունելու Ներքին-Ախտայի գիւղերի երիտասարդութեան այդ ձեռնարկութիւնը, ցանկանալով նրան աւելի աջող կուլտուրական դեր խաղալ մեր խաւար շրջապատի կեանքում։ Մենք լիայոյս ենք, որ բժիշկ Մնացականեանի ջանքերով ստեղծված այդ ընկերութիւնը, որի գանձապահի պաշտօնն է ստանձնել ինքը բժիշկը, կարող է անշուշտ արդարացնել իր վրա դրված յոյսը։

Աւելացնելու ենք նաև այն,—և այդ ի զգուշութիւն այդ ընկերութեան անդամներին—որ երբ մի ընկերութիւն ցանկանում է մի որևէ արդիւնաբերութեամբ կամ առևտրական ձեռնարկութեամբ պարապել, նա պէտք է այդ գործի վրա նայի որպէս ժողովրդական կուլտուրական ձեռնարկութեան, ուստի նրա հետ կապված բոլոր պայմանները և ծրագիրները պէտք է նախապէս չափված ու կշռված լինեն։ Այդ անշուշտ պէտք է ի նկատի ունենայ Ներքին-Ախտայի նորաբողբոջ ընկերութիւնը։ Այլ կերպ՝ նայել գործին անփութութեամբ կամ գործը տանել անհեռատեսութեամբ,—դա կարող է փչացնել ձեռնարկութիւնը և տապալել գործը, նսեմացնելով կօօպերատիվ ձեռնարկութիւնների վարկը ժողովրդի աչքում։

Ներքին-Ախտայում գոյութիւն ունի նաև մանր կրեդիտային ընկերութիւն, որը պակաս դեր չէ խաղում ժողովրդական տնտեսութեան մէջ։ Գ. Սինանեան

Նոր-Բայազէտ, 28 ապրիլի

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԳՕՐՈՒ ԵՒ ԴՈՒՇԷԹԻ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

Գօրու և Դուշէթի գաւառների հայ ազգաբնակութեան երեխաների ընդհանուր թւի միայն 5%-ն է ուսանում ծխ. դպրոցներում, իսկ 95%-ը հնարաւորութիւն չունի ծխ. դպրոցներում տեղ գտնելու և մայրենի լեզուն սովորելու։

Որքան էլ այս երևոյթը տարօրինակ թւայ, սակայն սա իրողութիւն է և ցերեկվայ լոյսի պէս պարզ։

Ահա թէ ինչպէս։

Գօրու և Դուշէթի գաւառները բաղկացած են 25 ծխական համայնքներից, որտեղ պաշտօնավարում են 30 քահանաներ։

1) Գօրի՝	3 ծխ. համ.,	մօտ 1000 տ. բն.,	5 քահ.
2) Դուշէթ	1 » »	200 » »	1 »
3) Անանուր	1 » »	150 » »	1 »
4) Մուխրան	1 » »	400 » »	2 »
5) Ախալգօրի	1 » »	120 » »	1 »
6) Ցխինվալ	1 » »	200 » »	2 »
7) Ախալքալաք	1 » »	400 » »	1 »
8) Սուրամ	1 » »	250 » »	2 »
9) Ձեգվի	1 » »	150 » »	1 »
10) Նիգբիս	1 » »	100 » »	1 »
11) Կաւթիսխև	1 » »	300 » »	1 »
12) Ղարաղաջ	1 » »	200 » »	1 »
13) Դօյես	1 » »	100 » »	1 »
14) Ուփլիսցիխէ	1 » »	150 » »	1 »
15) Կասպի	1 » »	120 » »	1 »
16) Քախվրիլ	1 » »	200 » »	1 »
17) Ջերտ	1 » »	200 » »	1 »
18) Խեթուբան	1 » »	150 » »	1 »
19) Կարալէթ	1 » »	300 » »	1 »
20) Տղվիաւ	1 » »	150 » »	1 »
21) Ռուիս	1 » »	200 » »	1 »
22) Դիրբ	1 » »	120 » »	1 »
23) Վաղա	1 » »	150 » »	1 »
	25 ծխ. համ.	5310 տ. բն.	30 քահ.

Այսպիսով ուրեմն յիշեալ երկու գաւառներում կան 25 ծխական համայնքներ, որոնք բաղկացած են մօտ 5310 տուն ազգաբնակութիւնից՝ 30 քահանաներով։ Յիշեալ 30 քահանաներից միայն 8-ը ունեն ստացած միջնակարգ կրթութիւն, մնացածները դուրս են եկած միջնակարգ դպրոցների այլևայլ դասարաններից, որոնց թւում կան և այնպիսիներ, որոնք դպրոցի երեսն անգամ չեն տեսած և դպրոցի շեմքն էլ ոտք չեն կոխած։

Եւ այս այսպէս էլ պէտք է լինի և է, և այսպէս էլ կը լինի, մինչև որ չը բարեփոխվեն եղած պայմանները, որովհետև ոչ թէ բարձրագոյն, այլ նոյնիսկ միջնակարգ կրթութիւն ստացած՝ խելքը գլխին մարդկանցից ով է գժվել, որ քահանայ ձեռնադրվի ներկայ մուրացկանական-առուտուրական պայմաններում։

Վերոյիշեալ 25 ծխ. համայնքներից միայն 8-ը ունեն ծխ. դպրոցներ (2-ը երկդասեան և 6-ը մի դասեան), իսկ մնացած 17 ծխ. համայնքները զուրկ են ծխ. դպրոցներից։

Եթէ իւրաքանչիւր տան մէջ հաշւելու լինենք 2 երեխայ (երկու սեռից էլ) կը ստանանք առնուազն մօտ 10,000։

Մենք գիտենք, որ ամեն մի ծխ. դպրոց միջին թւով կարող է իր մէջ տեղաւորել մօտ 60 հոգի, որովհետև շատ տեղերում ծխ. դպրոցները ունեն միացեալ բաժանմունքներ և միայն մի ուսուցիչ, ուրեմն 8-ը դպրոցները միասին կարող են տեղաւորել 480—500 երեխայ։

Բաժանելով 10,000-ը 60-ի վրա (ամեն մի դպրոցի աշակերտների թւի վրա) կը տեսնենք, որ ազգաբնակութեան բոլոր երեխաներին ծխ. դպրոցներում տեղ տալու համար հարկաւոր է ունենալ ոչ թէ 8 ծխ. դպրոցներ, այլ 166 (166×60=9960 երեխայ) ծխ. դպրոցներ, այսինքն եղած ծխ. դպրոցների քսանապատիկը։

Այս մօտաւոր հաշւից երևում է, որ բոլոր ծխ. դպրոցներում մեր երեխաների միայն 5%-ը հնարաւորութիւն ունի տեղ գտնելու և սովորելու, իսկ 95%-ը մնում է դուրս և անկարող սովորելու մայրենի լեզուն։

Աւելորդ է յիշել եղած ծխ. դպրոցների նիւթական աննախանձելի դրութիւնը, որի պատճառով մեր ծխ. դպրոցները կարծէք մի տեսակ արտէզեան աղբիւրներ լինեն և պաշտօնավարող ուսուցիչ-ուսուցչուհիներն էլ՝ չուող կռունկներ։

Ոչ պակաս աննախանձելի դրութեան մէջ են և կրթականի կողմից, որի ինկութիւնը ցոյց տալու համար կը յիշեմ միայն մի դէպք, որին ես ինքս ականատես եղայ։

Դուշէթի գաւառի գիւղերից մինի ծխական դպրոցում միայնակ վարում է վարժուհու պաշտօն՝ Ցոմխանեան դպրոցի շեմքից նոր դուրս եկած մի ընթացաւարտ օրիորդ։ Այդ դպրոցի բաժանմունքները միացած են և սովորում են մօտ 50 երեխաներ երկու սեռից։

Վարժուհին աւանդում է միայն երեք առարկայ՝ հայոց և ռուսաց լեզուներ և թւաբանութիւն, միւս բոլոր առարկաները դուրս են հանված դպրոցական ծրագրից։

Այս դէպքին ես ներկայ եղայ այս տարւայ փետրվար ամսին, երբ դեռ ես այնտեղ չէր այցելել թեմական տեսուչը։ Թէ ինչ հետևանք ունեցաւ թեմական տեսչի այցը, դեռ յայտնի չէ։

Ահա այս և սոյնանման մի քանի կարևոր ու կարևորագոյն հարցերի ու խնդիրների շուրջը պիտի պտտվի Նորընտիր Կաթողիկոսի մտաւոր ոյժն ու փորձառութիւնը իր ամբողջ էութեամբ։

Ցխինվալ Հմ. ք. Օհանեանց

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ԶԱՔԱԹԱԼԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Զաքաթալա, 13 ապրիլի

Նախ սկսենք Զաքաթալա քաղաքից։

Վաղուց ի վեր մեր հարուստ և միանգամայն վաճառաշահ քաղաքը չէ ունեցած իր սեփական քաղաքային բժիշկը. էլ չենք խօսում քաղաքային հիւանդանոցի մասին։

Շրջանիս նախկին կառավարիչ գեներալ Շելկօվնիկեանը այդ մեծ կարիքը լաւ ըմբռնելով՝ նախ և առաջ շրջանիս համար նշանակել տուեց երկու բժիշկ՝ մէկը աւագ և միւսը կրտսեր տիտղոսներով՝ և այնուհետև մտածեց նիւթական միջոցներ որոնել՝ սահմանելու քաղաքիս ազգաբնակութեան համար քաղաքային բժշկի պաշտօն և ապա՝ բաց անել յարմար առիթով նաև հիւանդանոց։

Սակայն ի մեծ ցաւ ամբողջ ազգաբնակութեան՝ գեներալ Շելկօվնիկեանը նոյն տարին տեղափոխվեց մի այլ տեղ, և իր այդ գեղեցիկ միտքը մինչև օրս էլ մնաց առկախ։ Նրանից յետոյ եկան, գնացին բազմաթիւ կառավարիչներ, որոնց անհոգութեան և դատապարտելի անտարբերութեան շնորհիւ՝ հանգուցեալ Շելկօվնիկեանի կառուցած պետական և հասարակական հիմնարկութիւններն ու կամուրջները, դպրոցներն ու հաղորդակցութիւնը, ջրանցքներն ու գետերի վարարումից վնասվող գիւղերի մօտ քաշած հսկայ պատերը իսպառ փչացան...

Այո, նրա յաջորդները համարեա թէ ոչինչ չաւելացրին տասնեակ տարիների ընթացքում մեր տառապող 200,000 ժողովրդի համար. այլ, ընդհակառակը, եղածն էլ, ինչպէս ասացինք, քայքայվեց իսպառ։ Շրջանիս 2 բժշկի փոխարէն էլ ունեցանք մի բժիշկ, որը շարունակ գիւղերը շրջելով պաշտօնական գործերով՝ ոչ մի բժշկական օգնութիւն չէր կարողանում հասցնել թէ քաղաքիս բազմաթիւ հիւանդներին և թէ գիւղերին։

Այդպէս շարունակվեց մինչև այսօր։

Հա՛, հիւանդանոց չունենալու պատճառով՝ Կովկասի բարձր իշխանութեան կարգադրութեամբ՝ ընդունվում էին տեղիս բերդի զինւորական հիւանդանոցում թէ քաղաքիս և թէ շրջանից եկող հիւանդները, որոշված վճարով։ Սակայն ի ցաւ մեր սրտի պիտի այստեղ խոստովանենք, որ այդ միակ փրկարար և քիչ շատ յարմարաւոր հիւանդանոցից էլ զրկվեցինք այս տարւայ հենց սկիզբներից։ Բարձր իշխանութեան կարգադրութեամբ՝ հիւանդանոցը ընդ միշտ փակվեց, նրա եղած-չեղածը աճուրդով ծախվեց, իսկ զինւորական բժիշկը—որից բժշկական օգնութիւն էին ստանում թէ քաղաքիս ժողովուրդը և թէ գիւղացիները—նշանակվեց Ալէքսանդրօպոլ։

Վերև ասածներից պարզ է, թէ ինչպիսի ողբալի վիճակի մէջ է գտնվում ներկայումս մեր ազգաբնակութիւնը բժշկական օգնութեան գործում։ Ոչ բժիշկ ունենք, ոչ էլ հիւանդանոց. յանկարծ ամեն բանից զրկվեցինք, չը գիտենք ո՞ւր և ո՞ւմ դիմել, երբ յանկարծ մեր երեխան, մեր եղբայրը, մեր կինը կամ մենք ծանրապէս հիւանդանում ենք և շուտափոյթ բժշկական օգնութեան կարօտում։

Այդ հանգամանքը ի նկատի առնելով՝ շրջանիս կառավարիչ գնդապետ Ա. Ե. Սուշչինսկին կրկին յղացաւ այն փրկարար միտքը, որ Շելկօվնիկեանն էր յղացել 1870-ական թ. սկիզբներին, այն է՝ միջնորդել փոխարքայի առջև նշանակել եկող 1913 թ. յունվարից քաղաքի համար սեփական բժիշկ, ապա՝ եթէ քաղաքիս բիւջէն ներէ՝ մի հիւանդանոց բաց անել Զաքաթալայի ժողովրդի համար։

Կարծում ենք, որ այստեղ բժիշկը տարեկան 1000 ր. ռոճիկով կարող է շատ լաւ ապրել, որովհետև նա միշտ կարող է լաւ պրակտիկա ունենալ. մեր ժողովուրդը միշտ լաւ է վարձատրում, միայն թէ բժիշկը բարեխղճաբար վերաբերվի հիւանդներին... և ոչ թէ վիրաւորանքներ հասցնէ դժբաղդներին։

Մեր արդի կառավարիչ Ա. Ե. Սուշչինսկիի նախաձեռնութեանն ենք պարտական, որ շրջանումս սահմանված են երեք գիւղական բժշկի պաշտօններ՝ հայաբնակ Կախ գիւղում, Ալիաբաթում և Ջարօ-Մուխախի գաւառակի համար, որոնցից իւրաքանչիւրը ունի իր ձեռքի տակ ֆելդշերներ, դեղատուն ու հիւանդանոց։

Երկու տարուց ի վեր է, ինչ ոչ ոք չէ համաձայնվում ստանձնել Ալիաբաթի գիւղական բժշկի պաշտօնը, ի նկատի առնելով նրա անտանելի կլիման։ Բայց բաղդաւոր ենք այսօր աւետելու, որ նորաւարտ երիտասարդ բժիշկ Գերասիմ Գէորգեանը ամենայն սիրով ստանձնելով այդ պաշտօնը՝ գալիս է ապացուցանելու և ամաչեցնելու այն բժիշկ կօլլէգներին, որոնք աշխատում են չաղ ու ապահով տեղ ընկնել։

Այո, բժ. Գէորգեանի՝ իր ուսերի վրա վերցրած խաչը խիստ ծանր է, որովհետև այդ գաւառում կան մի քանի ինգիլոյ և թուրք գիւղեր, որոնց մէջ բժշկի չգոյութեան պատճառով՝ սաստիկ բուն է դրել սիֆիլիս հիւանդութիւնը։

Սպասենք ուրեմն, որ վերոյիշեալ մեր գրածները շատ շուտով կիրականանան շնորհիւ մարդասէր Սուշչինսկիի և Գէորգեանի։ Սօյգալէ

Զաքաթալա

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 10 մայիսի

Նախագահում է Րօդզեանկօն։

Դմիտրիւկօվը զեկուցանում է գլխաւոր զինւորա-դատական վարչութեան նախահաշիւը, որի հաշւեկշիռն է 1.598,987 րուբլի։

Կուզնէցօվը անհրաժեշտ է գտնում հակառակ հոկտեմբերեանների, որոնք նկարագրում են Դումայի հինգամեայ գործունէութիւնը ուրախալի գոյներով, եզրակացութիւն անել սօց.-դէմ. տեսակէտից։ Բերելով վիճակագրական տեղեկութիւններ մահվան պատիժների մասին յընթացս հինգ տարիների, հռետորը մատնանշում է, որ մահվան պատժին կողմնակից Դումայի 200 անդամներից իւրաքանչիւրին ընկնում է 6-ական մահապատիժ։

Սինադինօն տեղից.—Իսկ որքա՞ն են սպանել դատապարտվածները։

Ձայներ աջից.—Խօսեցէք նախահաշւի մասին։

Կուզնէցօվը շարունակում է, ասելով որ մահապատժի ինստիտուտը յընթացս հինգ տարիների ոչ միայն իրագործվեց երկրի ներսում, այլև փոխադրվեց երկրից դուրս՝ Պարսկաստան։

Նախագահը երեք անգամ խնդրում է Կուզնեցօվին խօսել բուն հարցի մասին, մատնանշելով թէ նախահաշիւը պարսկական գործերին չէ վերաբերում։

Կուզնէցօվը հաւատում է, որ կը գայ այն օրը, երբ պրօլետարիատի ներկայացուցիչները կը մեկնեն իրանց եղբայրական ձեռքը պարսիկ ժողովրդին՝ խորին ցաւ յայտնելով, որ նրանք անկարող էին խափանել այն, ինչ որ կրում է այդ ժողովուրդը (ծափահարութիւն ձախից, ծիծաղ աջից և կենտրօնում)։

Պուրիշկէվիչը առաջարկում է ընդունել նախահաշիւը ամբողջովին, աւելացնելով որ չէ կարելի թոյլ տալ որպէսզի միտինգային ճառեր արտասանվեն Դումայի ամբիոնից ընտրութիւնների նախօրեակին. «Ես,—ասում է հռետորը,—մինչև սրտիս խորքը զայրացած եմ Դումայի անդամ Կուզնէցօվի խուլիգանական ճառից»։

Նախագահը Պուրիշկէվիչին վերջին դարձուածքի համար կարգի է հրաւիրում։

Նախահաշիւը ընդունվում է։

Ովօլժինսկին զեկուցանում է գլխաւոր ինտենդանտական վարչութեան նախահաշիւը, որի հաշւեկշիռը որ կազմում է 347.997,042 րուբլի, որպիսի գումարից բիւջէտային մասնաժողովը կրճատել է 1.799,488 ր.։

Գուչկօվը գտնում է, որ շնորհիւ սենատօրական քննութիւնների՝ վարչութեան մէջ կատարվող մաքրումը, սրբումը, ինչպէս նաև պաշտօնեաների վերակազմութիւնը անկասկած ունեցել են իրանց լաւ արդիւնքները ինտենդանտական գործում. բայց և այնպէս դեռ վաղաժամ է ասել, թէ ամենայն ինչ կատարեալ է, որովհետև հարցը վերաբերում է դարաւոր չարիքին։ Գուչկօվը բանաձև է առաջարկում, որպէսզի մինիստրութիւնը ամենալուրջ ուշադրութիւն դարձնէ դրամայատկացումները ուշացնելու և զօրքերին անհրաժեշտ պիտոյքները իր ժամանակին հայթայթելու վրա։

Նախահաշիւը ընդունվում է Գուչկօվի բանաձևով։

Դմիտրիւկօվը զեկուցանում է ծովային մինիստրութեան նախահաշիւը՝ 159.074,970 ր., որից միայն 54½ միլիօն գնալու է նաւաշինութեան վրա։ Մասնաժողովը յիշեալ գումարից կրճատել է 4½ միլիօն։

Ծովային մինիստրի երկար ճառից և մի քանի հռետորների նկատողութիւններից յետոյ նախահաշիւն ընդունվում է մասնաժողովի գումարներով։

Սվէնցիցկին զեկուցանում է ճան. հաղորդակցութեան մինիստրութեան արտակարգ ծախքերի նախահաշիւը՝ 108.860,258 ր., որը և ընդունվում է։

Գօղնէվի զեկուցման համաձայն, առանց վիճաբանութեան ընդունվում է զինւորական մինիստրութեան արտակարգ ծախքերի գումարը՝ 70.128,950 ր.։

1912 թւի եկամտի ծախքերի նախահաշիւների քննութիւնը աւարտված է։

Բիւջէտային մասնաժողովի նախագահ Ալէքսէենկօն զեկուցանում է 1912 թ. պետական եկամուտների նախահաշիւը, որի համագումարն է 2.901.919,261 րուբլի։ Այս տարւայ առաջին երեք ամսում եղել է 22 միլիօնով աւելի եկամուտ, անցեալ տարւայ միևնոյն ժամանակաշրջանից։ Այնպէս որ կարելի է լաւատես լինել, որ բիւջէտային մասնաժողովի որոշած գումարները կը մնան իրանց ոյժի մէջ։

Նախահաշւի առանձին յօդուածներն ընդունվում են առանց քուէարկութեան։

Նախագահը յայտնում է, որ եկամտային նախահաշւի քննութիւնից յետոյ՝ բիւջէի քննութիւնը պէտք է վերջացած համարվի։

Ալէքսէենկօն իջնում է ամբիոնից բոլոր աթոռներից լսվող երկարատև ծափահարութիւնների տակ։

—

Երեկոյեան նիստում նախագահում է Կապուստինը։

Հերթին բարձր կրթական հաստատութիւնների հարցի քննութեան շարունակութիւնն է։

Գօղնևի և Դամշայի քննադատական ճառերից յետոյ, Դուման 105 ձայնով ընդդէմ 102-ի (9 հոգի ձեռնպահ) ընդունում է Գուչկօվի հետևեալ բանաձևը. «Դուման գտնում է, որ 1910 և 1911 թ.թ. բարձր կրթական հաստատութիւնների անկարգութիւնները ճնշելու համար կառավարութեան ձեռք առած միջոցները ապօրինի են, իսկ ժող. լուս. մինիստրի բացատրութիւնները՝ անբաւարար. Դուման կառավարութիւնից պահանջում է, որ օրէնսդրական հաստատութիւններին կը ներկայացվեն ճեմարանական կեանքը կանոնաւորելու համար անհրաժեշտ օրինագծեր, և անցնում է հերթական գործին»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ամսիս 10-ին Թիֆլիսում կայացաւ մի խորհրդակցութիւն բանաստեղծ Յովհաննէս Յովհաննիսեանի տաղանդը յարգողների. որոշվեց մի բազմամարդ ժողով հրաւիրել, խորհրդակցելու թէ ինչ ձևով Թիֆլիսի հայ հասարակութիւնը մասնակցի բանաստեղծի յոբելեանին։ Ժողովը կայանալու է Բարեգ. Ընկ. դահլիճում կիրակի ամսիս 13-ին, երեկոյեան ժամը 7½-ին։

◆ Մանր վարկի գործերը վարող վարչութիւնը Թիֆլիսի նահանգի այլ և այլ վայրերը քննել յանձնարարեց Ս. Վասիլիէվին, որը պիտի պարզէ և ուսումնասիրէ մանր վարկի գործը աւելի ընդարձակ և ամուր հիմքերի վրա դնելու համար։ Ս. Վասիլիէվին միաժամանակ յանձնարարված է քննութիւն կատարել վարկային մի քանի ընկերութիւնների մէջ։

◆ Ապագայ վաճառականական բանկի ձեռնարկողների նիստում, որ կայացաւ երէկ երեկոյեան, յայտնվեց, որ հիմնական դրամագլխի համար, փոխանակ ծրագրված 2 միլիոն ռուբլու՝ արդէն ստորագրվել են 3 միլիոնի ակցիաներ։ Այս անակնկալ աջողութիւնը մեծ աշխոյժ և եռանդ է ներշնչել ձեռնարկողներին և առհաւատչեայ է, որ գործը մեծ աջողութիւն կունենայ։

◆ Ուսուցչուհիների և դաստիարակչուհիների Թիֆլիսի ընկերութիւնը իր մանկական գրադարանի համար գնել է Օ. Կայդանովայի գրադարանի գրքերից 1000 հատ։

◆ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգ. Ընկ. վարչութիւնը խնդրում է մեզ տպել, որ ինքն շնորհակալութեամբ ստացել է յօգուտ Ընկերութեան հանգուցեալ Ալ. Մանթաշեանի ժառանգներից 20,000 ռուբլի՝ բարեգործական նպատակների համար հանգուցեալի թողած գումարից։

◆ Բագւում, III գիմնազիայի 6-րդ դասարանի աշակերտ Կասիմովը դասի ժամանակ ատրճանակից կրակելով երկու անգամ, ծանրապէս վիրաւորել է ֆրանսերէնի ուսուցիչ Մ. Ապրակսինին։ Մ. Ապրակսինի գրպանից, վայր ընկնելու ժամանակ, դուրս է ընկել մի նամակ, գրված Կասիմովի ձեռքով, որի մէջ վերջինս գրում է, թէ մահափորձի օրը պիտի վճռվի Ապրակսինի վիճակը։ Մահափորձից յետոյ Կասիմովը թաքնվել է, սակայն 3 ժամից յետոյ խուզարկու ոստիկանութեան գործակալներից մէկը նրան ձերբակալել է։ Ապրակսինը ստացել է երկու վէրք, որոնցից մէկը ծանր է, իսկ միւսը թեթև։ Մահափորձի պատճառը վատ թւանշանն էր։

◆ Մեզ խնդրում են տպագրել, որ յօգուտ «Լոյս» Ընկերութեան Արտիստական Ընկերութեան պարտէզում մայիսի 12-ին կայանալիք զբօսանքը, Հոգեգալստեան տօների պատճառով, յետաձգվում է։ Նոր զբօսանքի մասին կը յայտարարվի առանձին։ Տոմսակները պահում են իրանց ուժը։

◆ Թոյլատրված է Կովկասի բեմերի վրա ներկայացնել հայերէն լեզուով Ժուկովսկիի «Որդիքը» 4 գործ. պիէսը։

◆ Դումայական վերստուգիչ մասնախումբը մայիսի 9-ին քննութիւն կատարեց Թիֆլիսի Ջրմուղի քաղաքային արհեստանոցում, ուր երևան հանվեցին թերութիւններ, որի մասին կը զեկուցվի քաղաքային վարչութեանը։

◆ Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան ակումբը իր ամառային շէնքը կը տեղափոխվի մայիսի 15-ից։ Շաբաթը մի քանի անգամ կը նուագէ սիմֆօնիական խումբը։

◆ Ն. Աբրահամեանի հաշւապահական դասընթացքներում ուսանողների քննութիւնները կը սկսվեն մայիսի 14-ից և կաւարտվեն մայիսի 20-ին։

◆ Մեզ խնդրում են տպել, որ մայիսի 9-ին Մուշտայիդում Թիֆլիսի Ժողովրդական Համալսարանի Ընկերութեան օգտին նշանակված զբօսանքը վատ եղանակի պատճառով յետաձգվեց։

◆ Հասարակական ակումբի (Բօրսայի դահլիճ) սովորական, բայց վերջին երեկոյթը շաբաթ օրվայ փոխարէն, տեղի կունենայ կիրակի, մայիսի 13-ին։ Երեկոյթը բաղկացած կը լինի գրական-երաժշտական բաժնից։ Կը մասնակցեն Ս. Բաքալեանը, մեր երիտասարդ ջութակահար Գ. Վրոյրը, Ս. Նիկոլաևվան, Գ. Նիկոլաևը և այլք։

◆ Իւրիեվի համալսարանի վրացի ուսանողները Թամարա Թագուհու անուանակոչութեան օրը, մայիսի 1-ին, շքեղ կերպով տօնել են այդ օրը, ներկայութեամբ Իւրիեվում ապրող բոլոր վրացիների։

◆ Зигзагъ-ի դէմ գրված յօդուածները «Մշակում» և «Հորիզոնում», վրաց «Սախալխօ Գազեթի» լրագիրը զետեղել է իր վերջին համարում, առաջինը ամբողջովին, իսկ երկրորդի մի մասը միայն։

◆ Վրաց դրամատուրգ Աւքսէնտի Ցագարելիի մահվան 10-ամեակը լրանալու առթիւ թէ Թիֆլիսում և թէ Վրաստանի այլ և այլ քաղաքներում ու գիւղերում ներկայացվում են հանգուցեալ դրամատուրգի պիէսները իրար ետևից և համարեա շաբաթը մի քանի անգամ։

◆ Վերջերս ծանրապէս հիւանդացած վրաց մանկավարժ Իակօբ Գոգեբաշվիլին վերջին օրերս բաւական լաւ է զգում իրան։ Բժիշկները յոյս են տալիս նրա կատարեալ ապաքինման նկատմամբ։

◆ Հաւլաբարի ս. Կարապետ եկեղեցու դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է մեզ տպել, որ ստացել է Աւետիք Մանուէլեանից 5 ռուբլի նոյն դպրոցի առաջադէմ աշակերտներին մանկական գրքոյկներ ընծայելու նպատակով։

◆ Մայիսի 10-ին Փոթիյսկայա փողոցում գտնվեցին արական և իգական սեռի երկու ընկեցիկ երեխաներ, որոնց մօտ գտնվեց մի գրութիւն, որից իմացվեց, որ երեխաները մկրտված չեն։

◆ Տպագրվում է և մայիսի վերջերին լոյս կը տեսնի «Ձեռնարկ իտալական կրկնակի հաշւապահութեան» գիրքը, հեղինակութիւն Ն. Աբրահամեանի։

◆ Քութայիսի քաղ. վարչութիւնը հարց է տուել Թիֆլիսի քաղ. վարչութեանը, հաղորդել իրան, թէ ինչ կերպ պիտի մասնակցէ Թիֆլիսի ինքնավարութիւնը Ռոմանովների Տան թագաւորութեան 300-ամեակի հանդէսներին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 10 մայիսի

«Մշակի» երէկվայ № 99-ում հ. Ս. ք. Տէր-Յովհաննիսեանը անարդարութիւն է համարում, եթէ «Մշակի» յոբելեանական ալմանախի մէջ չը մտցվի և «Մշակը» ու հայ հոգևորականութիւնը», ու ցանկութիւն է յայտնում, որ հայ հոգևորականութիւնը կազմէ այդ գլուխը և յանձնէ ինձ քառասնամեայ «Մշակի» ալմանախում զետեղելու համար։

Անհրաժեշտ եմ համարում ազդարարելու, որ այդ բաժինը լի ու լի կայ, այն է՝ «Մշակը» և եկեղեցին ու կրօնը» վերնագրով, որի նիւթերն են. 1) Գրիգոր Արծրունու նամակը Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանին, 2) վերջինիս նամակը տիկ. Եղիսաբէթ Սարգսեանին, որ տպագրվում է fac-similé և 3) Երուանդ Տէր-Մինասեանի (նախկին վարդապետ) յատուկ այդ ալմանախի համար շատ ուշագրաւ յօդուածը՝ «Մշակը» և եկեղեցին ու կրօնը»։

Եթէ մտցվի «Մշակը» և հայ հոգևորականութիւնը» բաժինը, այն ժամանակ պէտք է մտցնել և «Մշակը» և հայ ուսուցիչը», «Մշակը» և հայ բանւորը», «Մշակը» և հայ բժիշկը», «Մշակը» և հայ դերասանը», «Մշակը» և հայ երկրագործը» ու անհամար «Մշակը» և հայ այս-ինչը, «Մշակը» և հայ այն-ինչը։ Այսպէս սահմանափակ չէ կազմված ծրագիրը, այլ ընդարձակ, այն է՝ «Մշակը» և հայ ազգը, հայ երկիրը, հայ գաղթականները և հայի գոյութեան փակտօրները։

Տ. Նազարեան

—

Էջմիածին, 7 մայիսի

Յ. Յովհաննիսեանի յոբելեանական յանձնաժողովս, ընդ առաջ գնալով զանազան կողմերից յայտնված ցանկութիւններին, բանաստեղծի տօնը աւելի շքեղ կատարելու համար, որոշեց յոբելեանական տօնը յետաձգել առաջիկայ աշնան։ Հանդիսի օրը կը յայտարարվի առանձին։

Նախագահ՝ Բագէն վարդապետ
Քարտուղար՝ Մ. Խոստիկեան

—

Բէշիրքեանդ (Ալէքսանդ. գաւ.), 24 ապրիլի

«Ժայռի» № 67-ում՝ Աշէրօն զետեղել է մի յօդուած, որի մէջ վերին աստիճանի անվայել ոճով յարձակվում է Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական Ընկերութեան և նրա վարչութեան անդամների վրա։ Յօդուածը մեզ վրա թողեց ամենաանախորժ տպաւորութիւն։

Մեզ, պ. Աշէրօն, յայտնի չէ, թէ ինչ էք անում և ինչ էք արել դուք հայ գիւղացիութեան օգտին որպէս գիւղատնտես. բայց մեզ՝ Աբարանցոլի, Փամբակի և այլ շրջանների գիւղացիներիս շատ լաւ ծանօթ է այն եռանդուն, օգտակար գործունէութիւնը, որ երկար տարիների ընթացքում ցոյց են տուել գիւղատնտեսներ՝ Ա. Քալանթար և իր ընկերներ՝ Ա. Աթանասեան և ուրիշները։ Մենք վկայ ենք, որ նրանք քանիցս անգամ ճանապարհորդութիւններ են արել մեր երկրի յետ ընկած տեղերում, ուր մինչ այդ ոչ մի գիւղատնտես ոտք չէր կոխել. Նրանց կարդացած զրոյցներն ու դասախօսութիւնները մեր մէջ, Ընկերութեան ուղարկած փորձնական սերմերը, նրանց կազմակերպած գութանների և ցաքանների փորձերը կենդանի գործեր են մեր աչքի առաջ կատարված և գնահատված բոլորից։

Ահա թէ ինչու, երբ այսօր մենք տեսնում ենք ձեզ քարեր գցելիս թէ այդ Ընկերութեան և թէ նրա շուրջ բոլորված անձերի վրա, մենք, ներեցէք մեզ, ամենայն վրդովմունքով ասում ենք՝ ամօթ ձեզ, պ. Աշէրօն, որ չունէք նոյնիսկ հասարակ բարեխղճութիւն ձեր գործունեայ արհեստակիցների օգտաւէտ գործերը պաշտպանելու և կարծում էք, որ չարամտութեամբ արած ձեր յարձակումները բոլորիս յայտնի և յարգված գործիչների վրա՝ մենք հալած իւղի տեղ կընդունենք։ Ոչ, սխալվում էք։ Դուք ինքներդ դեռ ոչինչ չէք արել, իսկ եղած գործը ցանկանում էք ուրանալ։

Այս նամակը վաղուց ուղարկված էր «Ժայռի» խմբագրութեանը, որի փակման պատճառով, դիմեցի նրա յաջորդ «Արագածին», բայց խմբագրութիւնը չը տպեց։

Յ. Միրզոյեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիւրքիան, աւստրիական լրագիրների ասելով, վճռել է երկրորդ անգամ փակել Դարդանէլը, եթէ իտալական նաւատորմը գրաւէ նոր կղզիներ Եգէյեան ծովում։

◆ Զինւորական մինիստրի պահանջով արագացվելու է Կովկասում թիւրքական սահմանագլխին կառուցվող խըճուղու գործը։

◆ Արդարադատութեան մինիստրը, յարդարացումն Լըժինի, պահանջել է բոլոր այն տեղերից, ուր պաշտօնավարել է Լըժինը, ուղարկել տեղեկութիւններ քննիչի մասին։ Առ այժմ պարզվել է, թէ երբ «Դաշնակցութեան» վաւերագրերի խարդախման գործում կասկածվում են դատախազի մի օգնական, թարգմանը և մի այլ պաշտօնեայ։ Ներկայումս Լըժինը հարցաքննվում է ոչ իբրև մեղադրվող, այլ սոսկ իբրև վկայ։

◆ Ներքին գործերի մինիստրը թոյլ չը տուեց հաստատել մի մշտական կոմիտէտ, որ պարբերաբար գումարէ հակաալկոհոլական համառուսական համագումարներ։

◆ Պետերբուրգից «Кав.»-ին հեռագրում են, որ ինժեներական մասի տեսուչ նշանակված է զինւորական խորհրդի անդամ ինժեներ-գեներալ իշխան Թումանովը։

◆ Աւստրիան և Գերմանիան իբրև Իտալիայի դաշնակից պետութիւններ լուրջ առաջարկութիւն են անելու Բ. Դրան առաջ, բողոքելով իտալական մասսայական արտաքսման դէմ։

◆ Պետերբուրգում հիմնվում է՝ հրէական շարժական թատրոն։

◆ Եալտայից ծանր հիւանդ դրութեան մէջ Պետերբուրգ տարան ծովակալ Դուբասովին։

◆ Կիէվում դատարանը 7 օրով բանտարկութիւն որոշեց հրեայ Խվաբիւկին, որ իշխան Երիստովի հետ խօսակցութեան ժամանակ ասել էր, «չէ՞ որ Յիսուսն էլ հրեայ էր...»։

◆ Ֆրանսիական պրեմիեր Պուանկարէն Պետերբուրգում սպասվում է յուլիսի սկիզբներին։ Նրա այցին տրվում է քաղաքական շատ խոշոր նշանակութիւն, մանաւանդ որ նա յատկապէս ունկնդրութեան է ընդունվելու Պետերհօֆում։

◆ Պարիզի և Մելնատէ կայարանի միջև տեղի ունեցաւ սոսկալի կատաստրոֆա, որի ժամանակ սպանվեցին 12, վիրաւորվեցին 40 մարդ։ Բացի դրանից յօշոտված են շատ երեխաներ։

◆ Համբուրգում խոշոր վաճառական Ադոլֆ Գօրնը գժերով խելագարութեան հասած՝ սպանեց իր կնոջը, հասակաւոր աղջկան, 15 և 18 տարեկան երկու տղաներին և 7 տարեկան մանկանը։

◆ Միլանում 70 տարեկան քանդակագործ Պարանչին կասկածելով իր հասակակից կնոջը իրան դաւաճանելու մէջ, սպանեց նրան բութ գործիքով։

◆ Բագւի 8 խոշոր նաւթարդիւնաբերողներ կազմեցին սինդիկատ, որի մէջն են Շիբաէվ, Նօբէլ, Ռուսական Ընկերութիւնը և այլն։

◆ Պետերբուրգում խօսում են, որ Պետ. Դումայի անդամ Մակլակովի եղբայրը, որ նահանգապետ է Չերնիգովում, նշանակվելու է ներքին գործերի մինիստր հրաժարվող Մակարովի փոխարէն։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

10 մայիսի

ՆՈՎՕ-ԱԼԷՔՍԱՆԴՐԻԱ։ Այրվեց Վօնվօլնից շինութեան ամբողջ փասադը։ Վնասները կէս միլիոն են։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 25-ին կայանալու է ռուսական երկաթուղիների ներկայացուցիչների համագումարը ժամուլի արտադրութիւնները բոլոր մարդատար գնացքներով փոխադրելու կանոններ մշակելու համար։

Վօլինի արքեպ. Անտոնիին հրամայվեց լինել սինօդի անդամ՝ մնալով հանդերձ իր պաշտօնում։

ԲԱԳՈՒ։ Արական գիմնազիայում դասի ժամանակ 6-րդ դասատան աշակերտ Կասումովը ատրճանակից ծանր վիրաւորեց ֆրանսերէն լեզուի ուսուցիչ կոմս Ապրակսինին։ Ցանցաւորը կալանաւորվեց։

ԼԻՍԱԲՈՆ։ Պատգամաւորների պալատը որոշեց վերացնել Վատիկանին կից գտնվող պորտուգալական միսիան։

ԿԻՐԶ։ Բացվեց ցեխաբուժական սեզօնը։

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ։ Զգացվեց երկրաշարժ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՈՎ ՇՓՈՒՄՆ Է ՈՒՆԵՆՈՒՄ տիֆով, քութէշով, ծաղիկով, կարմրուկով, սիֆիլիսով, քոսով և նման հիւանդութիւններով վարակվածների, կամ նրանց հագուստեղէնի, սպիտակեղէնի և առհասարակ այն առարկաների հետ, որոնք գործածութեան մէջ են այդօրինակ հիւանդների մօտ, նա պէտք է, որպէսզի թէ իրան և թէ ուրիշներին զերծ պահէ վարակումից, շարունակ օգտվի «№4711 **ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՊՈՆԻՑ**»։

Գործածութեան իսկական եղանակը (ռուսերէն և գերմաներէն լեզուներով) կցված է իւրաքանչիւր կտորին։

Առանձնապէս առաջարկվում են՝ «№ 4711 Կարբօլեան Սապօնը» (պիտանի է նաև հիւանդների սպիտակեղէնների լուացումի ժամանակ) և «№ 4711 Սուլէմային Սապօնը»։

«№ 4711 Բժշկական Սապօնը» կարելի է ստանալ բոլոր դեղատներում, դեղավաճառ և պարֆիւմերիային խանութներում, իւրաքանչիւր կտորը տասն կօպէկից սկսած։

Գնելու ժամանակ պէտք է ուշադրութիւն դարձնել, որպէսզի իւրաքանչիւր կտորի վրա լինի «№ 4711»։ Միայն նա է տալիս գարանտիա սապօնի լաւ յատկութեան համար։

(2,22,12)   (М.183997)   4—1

ПРЕВОСХОДНЫЙ
ГЛЯНЦЪ ЛАКЪ
ДЛЯ ЧИСТКИ
ОБУВИ
ФАБРИКИ
А.ЗАКСЪ.
СПЕТЕРБУРГЪ КАЗАНСКАЯ 6
А.ЗАКСЪ
С.ПЕТЕРБУРГ
КАЗАНСКАЯ
№ 6
SCHUHE

(П. 73531)   8—4

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

Ձմեռային երթևեկութիւն

ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ

Մեկնում են Բաթումից

I Պօստային-մարդատար շոգենաւերը.
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով
Հինգշաբթի » 1 » » »
Շաբաթ » 12 » ուղղակի »

II Մարդատար շոգենաւերը.
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » » »

III Մարդատար-ապրանքակիր շոգենաւերը.
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » » »

Ժամերը Պետերբուրգի են։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի բիօլեազայի, Մակեդոնիայի, Սերբիայի, Անատոլիայի-Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։

ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ

Կանոնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Ռիգա, Լիբավա և Ռէվել։

Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում, Վելիամինովսկայա փողոց, № 18.

Հեռախօս № 11.

Ընդունվում են եւ ապահովացվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։

Գործակալ՝ Ս. Խ. Սուլխանեանց

(շ.)   0—48

ԲԺԻՇԿ

Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ

(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)

Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մասնագիտ. ԹՈՔԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէբուտովսկայա, № 66.
(շ. ե.)   130.   100—97

ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

ԱՄԱՌ ԺԱՄԱՆԱԿ ՆՈՅՆՊԷՍ

քախեքի, խլացքի, արեան պակասութեան և սրա հետևանքների, նոյնպէս և երկարատև քայքայող հիւանդութիւնների ժամանակ տուէք պրոֆէսօրների և բժիշկների կողմից յանձնարարված ՄԱԳԻՍՏՐ ԿՐԷՊՍԻ

ԵԿՈՐՈՖՕՍՖԻՏԸ։

Վաճառվում է ամենուրեք։

(շ.)   (П. 76778)   4—2

Հրաւէր

Շամքորեցոց «Կարմիր Աւետարան» եկեղեցու չափահաս ծխականները կիրակի, ամսիս 13-ին, առաւօտեան ժամը 11-ին հրաւիրվում են ծխական ժողովի (երկրորդ ժողով)։

Օրակարգի խնդիրներն են. 1) Նախկին դպրոցական շէնքի վերաշինութիւնը և 2) Ընթացիկ խնդիրներ։

Շամքորեցոց ծխական դպրոցի
Հոգաբարձութիւն

(ա. օ.)   335.   2—2

Գոյքերը "Կրակից" Ապահովագրող Թիֆլիսի Փոխադարձ Ընկերութեան Վարչութիւնը

յայտնում է ի գիտութիւն Ընկերութեան պ.պ. անդամների, որ կիրակի, մայիսի 13-ին, առաւօտեան ժամը 11-ին, Քաղաքային Կրեդիտային Ընկերութեան դահլիճում (Պուշկինսկայա փող., № 3) տեղի կունենայ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ի տեղի ապրիլի 29-ին չը կայացած ժողովի։ Այդ ժողովին կը քննվեն բոլոր այն հարցերը, որոնք նշանակված էին ապրիլի 29-ի ժողովի համար։

Ըստ սմին Վարչութիւնը պատիւ ունի խնդրելու պ. պ. անդամներին, որ Ընկեր. կանոնադր. § 26-ի հիման վրա, նշանակված յիշեալ ժողովը կը համարվի, յամենայն դէպս, օրինաւոր կայացած, չը նայած ներկայ եղող անդամների թւին։

(շ.)   307.   2—2

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

1) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I . . . գ. 1 ռ. —
2) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրժինի, I և II հատորներ . . . 1 ռ. 50
3) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . — 50 կ.
4) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ Քամալեանց Ս-ի. . . — 50 կ.
5) ՋՀՈՒԴ-ՔՈՒՇԱՆ, վէպ Պարսկաստանի կեանքից, Շահրիարի . 1 ռ. — կ.
6) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ, Հ. Առաքելեանի . . — 40 կ.
7) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, թարգմ. Արշակ Սաֆարեանի 1 ռ. 50 կ.
8) ՀԱՅՐԵՆԱԶՈՒՐԿ, Ե. Սպիրիի, թարգմ. գերմ. Իս. Յարութիւնեանի, — 50 կ.
9) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտական վէպ Կամիլ Ֆլամարիօնի. թ. Հ. Առաքելեանի 1 ռ. 50 կ.
10) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ. . 1 ռ. 20 կ.
11) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի . . . — 40 կ.
12) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդօյի, թարգմ. Հ. Առաքելեանի . — 60 կ.
13) ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿԱՐԱՆ, բժշկպ. Գ. Բաբեանի
 I հատոր, Բնախօսութիւն եւ անդամազննութիւն . . . 1 ռ. —
 II » Հիւանդութիւններ (վարակիչ, ներքին, կաշուի), դեղարան, 1 ռ. 60 կ.
 բառարան . . . . . — 5 կ.
14) ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ, բժ. Ա. Բուդաղեանի. . . — 15 կ.
15) ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ խոլերայի մասին, բժ. Վ. Արծրունու .
16) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան, Հ. — 50 կ.
 Առաքելեանի . . . . . — 50 կ.
17) ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐԸ, Հ. Իբսէնի, թարգմ. Լ. Բաբայեանի 1 ռ. —
18) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, թարգմ. Հ. Առաքելեանի . — 40 կ.
19) ՆՈՐ ԿԵԱՆՔԻ ՇԵՄՔՈՒՄ, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Ք.-ի — 60 կ.
20) ՆՇԱՆՎԱԾՆԵՐ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի . . — 50 կ.
21) ԷԴՄՈՆՏ, ողբերգ. 5 գործ. Վ. Գ. Գէօթէի, թարգմ. Հմ. Մաժինեանի — 30 կ.
22) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, Լ. Ն. Տօլստոյի, թարգմ. Սուրխաթեանի .
23) ԿՈՆՖՈՒՑԻՈՍ (Չինական իմաստունը), Լ. Ն. Տօլստոյի խմբագրութեամբ — 7 կ.
 կազմեց Ա. Բուլանժէ, թարգմ. Սուրխաթեանի . . — 5 կ.
24) ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ ՄԱՀՕՄԷԴԻ, ընտրված Լ. Տօլստոյի, Թ. Լ. Դանիէլեանի — 5 կ.
25) ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԷԿ Է, Լ. Տօլստոյի, թարգմ. Լ. Դանիէլեանի — 5 կ.
26) ՔՈՅՐԵՐԸ, Լ. Տօլստոյի, թարգմ. Լ. Դանիէլեանի . . — 10 կ.
27) ԻՆՉՈ՞Վ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, Լ. Տօլստոյի, թարգմ. Լ. Դանիէլեանի
28) ՇԷՔՍՊԻՐ ԵՒ ԻՐ «ՀԱՄԼԷՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Պետրոս Ադամեանի . . . . . 1 ռ. —
 — 40 կ.
29) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի . . — 20 կ.
30) ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեվագրութիւն), Ստ. Մալխասեանցի . — 35 կ.
31) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի — 15 կ.
32) ՃՈՐՏԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով . . — 25 կ.
33) ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ, Ե. վ. Տէր-Մինասեանի — 15 կ.
34) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ. Մ.-ի — 25 կ.
35) ՃԱՊՕՆԻԱ կամ Ծագող Արեգակի երկիրը, Գ. Ի. Շրէյդէրի . — 30 կ.
36) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի . — 25 կ.
37) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի — 80 կ.
38) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒՑ, Մակ. եպ. Բարխուդարեանի —

Նրանք, որոնք կը դիմեն մեզ՝ պահանջելով վերոյիշեալ գրքերից 5 ռուբլուց բարձր գումարի՝ կը ստանան 25% զեղջ։ 10 ռ. բարձր գումարի պատուէր տուողներն ստանում են 30% զեղջ։

«Մշակի» բաժանորդներից նրանք, որոնք վերոյիշեալ բոլոր գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն, կը ստանան 40% զեղջ։   50—22

ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱ։

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.